

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ԱՆՑԵԱԼԷՆ

ՄԻՆՉԵՒ

ԱՅՍՕՐ



**HDV**  
PUBLICATIONS

Հայագիտությունը  
Անցեալէն  
Մինչեւ  
Այսօր

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ԱՆՑԵԱԼԷՆ

ՄԻՆՉԵԻ

ԱՅՍՕՐ



**Հայագիտությունը Անցեալէն  
Մինչև Այսօր**

Հրանդ Տինք Հիմնարկ  
Պոլիս Հայկական Ուսումնասիրություններու Ինստիտուտ

գեկուցում  
**Արաս Էրկինեշ**

խմբագրություն  
**Ալթուղ Եղմագ**

բովանդակության աջակցություն  
**Վահագն Քէշիշեան, Մեհմետ Փօլարէլ**

քարգմանություն  
**Անի Տէկիրմենճեան**

ձեռագրում  
**Պիլներ Էրքմեն**

կրաֆիք կիրառում  
**Էրկէ Երսան**

Տպագրական պատրաստություն  
**Պարրշ Արքուրթ**

Տպագրություն  
**Mas Matbaacılık San. ve Tic. A.Ş.**  
Hamidiye Mahallesi, Soğuksu Caddesi 3  
Kağıthane 34408 İstanbul, TR  
T +90 212 294 10 00  
kitap@masmat.com.tr

Իսթանպուլ, Ապրիլ 2018

ISBN  
xxxxxxxxx



©Հրանդ Տինք Հիմնարկ Հրատարակչություն  
Անարատ Յղութին Շէնք,  
Փափա Ռոնգալլի Փողոց, Թիւ 128  
Հարպիէ 34373 Շիշլի, Իսթանպուլ  
Հեռ: +90 212 240 33 61 - 62 Ֆաքս: +90 212 240 33 94  
info@hrantdink.org  
hrantdink.org



SWEDEN

Այս տեղեկագիրը պատրաստուած է  
Շուէտի Գլխաւոր Հիւպատոսարանի աջակցութեամբ

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

Ներածական 6

Հայագիտությունը Եւրոպայի Մէջ 10

Հայագիտությունը ԱՄՆ-ի Մէջ 18

Հայագիտությունը Միջին Արեւելքի Մէջ 24

Ռուսիոյ, Ուքրանիոյ Եւ Վրաստանի Մէջ Հայագիտությունը 28

Հայաստանի Մէջ Հայագիտությունը 30

Թուրքիոյ Մէջ Հայագիտութեան Հիմքերը 33

Հանրապետական Շրջանէն Մինչև 1990-ականներ 34

Թերթերու Եւ Անհատներու Դերը 1923-էն Ետք 35

1990-ականներ Եւ Փոփոխություն 40

2000-ականներուն Հայագիտությունը Թուրքիոյ Մէջ 43

Դէպի Նոր Ուսումնասիրական Հաստատութեան Ստեղծում 48

Հրանդ Տինք Հիմնարկի  
Պոլիս Հայկական Ուսումնասիրություններու Ինստիտուտը 50

Յտեղուած Ա - Հայագիտական  
Պարբերական Հրատարակություններ 54

Յտեղուած Բ – Հայաստանէն Դուրս  
Հայագիտական Կեդրոններ 58

Սոյն գրքոյկը պատրաստուած է 2016 թուականին իրականացուած ուսումնասիրութեան մը հիման վրայ: Աշխատութեան նպատակը եղած է աշխարհի եւ Թուրքիոյ մէջ հայագիտութեան մինչ օրս արձանագրուած յաջողութիւնները երեւան հանել: Աշխատութիւնը ստեղծուած է Հրանդ Տինք Հիմնարկին յարկին տակ կեդրոն ստեղծելու ուղղութեամբ տարրուղ աշխատանքներուն ծիրէն ներս:

Ուսումնասիրութեան ընթացքին նախ մանրամասնութեամբ քննութեան առնուած է հայագիտութեան պատմութեան գրականութիւնը, ապա անհատաբար հանդիպումներ տեղի ունեցած են այս ոլորտին մէջ աշխատող օտար եւ տեղացի ակադեմականներու հետ, վերջապէս կազմակերպուած են կլոր-սեղան քննարկումներ: Հանդիպումներ տեղի ունեցած են արտասահմանէն մասնագէտներու հետ: Տրուած են նաեւ այցելութիւններ տարբեր հիմնարկներու եւ հաստատութիւններու: Անկէ զատ կեդրոնը ունեցած է աշխատանքները համակարգող խորհուրդ մը, որուն մաս կազմած են՝ Աիֆեր Պարթու Ճանտան, Այշէ Քատրօղլու, Արտաշէս Մարկոսեան, Արուս Իւնուլ եւ Պօղոս Լեւոն Չեքիեան: Օգտագործուած են նաեւ վերջիններու աշխատութիւնները: Խորհուրդին կողմէ տրուած են նաեւ տեղեկութիւններ համապատասխան աղբիւրներու, մարդոց եւ հիմնարկներու մասին: Տեղի ունեցած են 3 կլոր-սեղան քննարկումներ, որոնց ընթացքին հայերէնի, մշակոյթի եւ գրականութեան շուրջ աշխատող ակադեմականներու հետ խօսուած է սոյն շրջանակին մէջ վերջիններու ունեցած փորձառութեան մասին: Խօսուած է նաեւ կեդրոնի կարիքներուն եւ այն շրջանակներու մասին, որոնց հետ համագործակցութիւնը նպատակայարմար կը համարուի: Մէկ տարուան ընթացքին հանդիպումներ տեղի ունեցած են Թուրքիայէն, Ֆրանսայէն, Իտալիայէն, Հայաստանէն, Լիբա-նանէն, Ամերիկայէն եւ Գանատայէն մօտաւորապէս հարիւր անձնատրութիւններու հետ:

Սոյն տեղեկագրութեան մէջ նախ կը ներկայացուի հայագիտութեան նկարագրութիւնը՝ իբրեւ գիտակարգ, ապա կը խօսուի պատմութեան ընթացքին հայագիտութեան մէջ տեղի ունեցած փոփոխութիւններու ու տարբեր երկիրներու մէջ անոր դրսեւորումներուն մասին: Աշխատութեան մէջ նախ կը ներկայացուի հայագիտութեան պատմական եւ աշխարհագրական ակադեմական զարգացումը: Յետոյ կը ներկայացուի ներկայիս Թուրքիոյ մէջ հայագիտութեան անցեալի յառաջապահ, ուսումնասիրութիւնները, գործունեութիւնները եւ զարգացումները:

Հայագիտութիւնը իր մէջ կը բովանդակէ պատմաբանութեան, ընկերաբանութեան, լեզուաբանութեան, հնագիտութեան եւ այլ գիտակարգային ուսումնասիրութիւններ: Ուսումնասիրութիւններու մէջ գործածուած աղբիւրները եւ մեթոտաբանական հասկացողութիւնները կը հանդիսանան այն գլխաւոր չափանիշերը, որոնցմով կ'որոշուի նիւթին հայագիտութեան գիտակարգին մէջ մտնելը եւ կամ հակառակը: Հայագիտութիւնը չի կրնար անջատուիլ անիկա կազմող այլ գիտակարգերէ:<sup>1</sup>

Հայագիտութեան մէջ տարբեր գիտակարգերուն համաչափ մեթոտներով ստեղծուած աշխատութիւնները կը բաժնուին չորս գլխաւոր խումբերու.<sup>2</sup>

- 1. Մասնատրապէս հնդեւրոպական լեզուներ ուսումնասիրող բազմաթիւ լեզուաբաններ, հայերէնի վերաբերեալ գիտական հետազօտութիւններ կը կատարեն:

<sup>1</sup>Մանրամասնութիւններու համար տե՛ս G. A. Brutian, “Armenology and Metaarmenology and the Concept of Metascience” [Հայագիտութիւնը եւ Հայագիտութեան Ուսումնասիրութիւնը եւ Գիտութեան Ուսումնասիրութեան Հասկացողութիւնը], Fundamental Armenology 1 (2005), www.fundamentalarmenology.am/datas/pdfs/56.pdf

<sup>2</sup> Հայագիտութեան աշխատութիւններուն թեմաները եւ կեդրոնները տե՛ս Տիգրան Գոյումճեան, Հայագիտութեան Ներկան Արտասահմանի Մէջ, Պէյրութ, Շիրակ, 1972. “The Role of University Chairs” [Համալսարաններու Ամբիոններու Դերը], Journal of Armenian Studies VII/2 (Summer 2003), էջ 31-37:

2. Հայագիտության մէջ, բազմաթիւ գիտնականներ կը հետաքրքրուին հին եւ միջնադարեան կրօնական նիւթերով եւ Աստուածաշունչի հրատարակութիւններով: Այս գիտնականները բանասիրութեան շրջանակի մէջ հին եւ միջնադարեան շրջանի Աստուածաշունչի հայերէն թարգմանութիւնները կը համեմատեն այլ լեզուներու թարգմանութիւններու հետ եւ կ'ուսումնասիրեն այդ ժամանակաշրջանի կրօնական եւ ընկերային ընթանումները:

3. Բազմաթիւ պատմաբաններ կը հետաքրքրուին հայոց պատմութեամբ եւ հայերէն լեզուով, որովհետեւ այս նիւթերը կը հատուի իրենց մասնագիտական գիտակարգերուն հետ: Այս մասնագիտական գիտակարգերն են մասնաւորապէս յոյներու, սելճուքներու, օսմանցիներու, խազարներու, բիզանդացիներու, արաբներու, ղփչաղներու եւ թուրքմէներու պատմութիւնները:

4. Կարգ մը գիտնականներ, որոնք կը հետաքրքրուին հայագիտութեամբ՝ իբրեւ առանձին գիտական ճիւղ, կը կեդրոնանան Տեղասպանութեան, սփիւռքի, յիշողութեան, Միջնադարի, Օսմանեան կայսրութեան, Բիզանդական կայսրութեան, Միջին Արեւելքի եւ նման նիւթերու, պատմական ժամանակաշրջաններու եւ աշխարհագրական տարածաշրջաններու վրայ եւ ուսումնասիրութիւններ կը կ'ընեն հայ ժողովուրդի պատմութեան, մշակոյթի, արուեստի, լեզուի, կրօնի եւ գրականութեան շուրջ:

Վերը խօսուեցաւ այն մասին, որ հայագիտութեան բովանդակութիւնը եւ սահմանները կ'որոշուին ըստ գիտութիւններու տարբեր նիւթերու հետ ունեցած իր յարաբերութեան: Հայագիտութեան զարգացումը կարելի եղած է այս ոլորտին շուրջ աշխատող կառոյցներ ստեղծող հետազօտական կեդրոններու շնորհիւ:

Աշխարհի տարբեր երկիրներու մէջ կը գտնուին կեդրոններ, որոնք կը նպատակադրեն ակադեմական ուսումնասիրութիւններ իրականացնել հայոց պատմութեան, մշակոյթի, ընկերային կառոյցներու եւ Հայաստանի վերաբերեալ: Այս աշխատութիւնները գրեթէ 800-ամեայ պատմութիւն ունին: Այս օրերուս Ամերիկայի, Եւրոպայի,

Հայաստանի եւ Միջին Արեւելքի մէջ կը գործեն անկախ եւ այլ կառոյցներու կից տարբեր հայագիտական կեդրոններ:<sup>3</sup>

Հայերէնի, գրականութեան եւ պատմութեան վերաբերեալ ժամանակակից գիտական ուսումնասիրութիւններու մեթոտներու ծիրէն ներս գիտական մօտեցումը, սկսած է մօտաւորապէս 200 տարի առաջ, Եւրոպայի մէջ: 20-րդ դարու սկզբին Տեղասպանութեան աղէտին տեղի ունեցած տարագրութենէն ետք, հայ ժողովուրդը Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ սփիւռքի ինքնութիւն ձեռք բերած է: Յայտնի է, որ յատկապէս 1970-ական թուականներուն Արեւմուտքի մէջ առաւել մեծ դեր ունեցած են ինքնութեան եւ յիշողութեան վերաբերեալ ուսումնասիրութիւնները: Այս բոլորին զուգահեռ, Հայկական Սփիւռքին մէջ եւս աճած է հետաքրքրութիւնը եւ շատցած են հայկական ինքնութեան վերաբերեալ ակադեմական ուսումնասիրութիւնները:

3 Արեստակես Միմալոբյան, Եւրոպայի Հայագիտական Կենտրոնները, Նորավանք, [www.noravank.am/eng/issues/detail.php?ELEMENT\\_ID=13178](http://www.noravank.am/eng/issues/detail.php?ELEMENT_ID=13178)

## ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՐՈՂԱՅԻ ՄԷՋ

Նկատելի է, որ մինչև 19-րդ դարու վերջը, հայագիտության մէջ կատարուած ուսումնասիրութիւնները մեծ մասամբ լեզուագիտական են:<sup>4</sup> Թէև լեզուաբանական ուսումնասիրութիւնները կը շարունակուին, սակայն 20-րդ դարու ընթացքին հայագիտական ուսումնասիրութիւններու կարեւոր բնագաւառները լեզուի եւ մշակոյթի փոխարեն դարձած են պատմութիւնը, սփիւոքը եւ ցեղասպանութիւնը: Ուստի, կրնանք ըսել, որ ժամանանակից համալսարանի գաղափարին զարգացումէն առաջ հայ եւ այլ հոգեւորականներու կողմէ վանքերու մէջ սերտուիլ սկսած հայագիտական նիւթերը, վերջին դարու ընթացքին համալսարաններու, աշխարհիկ կառոյցներու եւ անհատ ուսումնասիրողներու աշխատութիւններու շնորհիւ մեծ փոփոխութիւն կրած են:

18-րդ դարուն Իտալիոյ Սուրբ Ղազար կղզիին մէջ Մխիթարեան միաբանութեան<sup>5</sup> աշխատանքներու շնորհիւ, Երուսալայի մէջ Հայագիտութեան համար նոր շրջան մը սկսած է: 1727-ին Մխիթար Սեբաստացիի կողմէ հրատարակուած «Դոռն Աշխարհաբար Լեզուի» եւ 1779-ին՝ «Բաղդիրք Հայկազեան Լեզուի» աշխատութիւնները կ'ընդունուին իբրև սկիզբ: Հայագիտութեան բնագաւառին մէջ ուսումնասիրութիւններ կատարողներու համար գլխաւոր կեդրոններէն մէկը հանդիսացող այս վանքին մէջ, 1843-էն սկսեալ

4 Dickran Kouymjian, "The Future of Armenian Studies" [Հայագիտութեան Ապագան], Journal of Armenian Studies VII/2 (Summer 2003), էջ 185-190:

5 Մխիթարեան Միաբանութիւնը ստեղծուած է 1700-ին Իսթամպուլի մէջ Սիւսցի եկեղեցական գործիչ Մանուկ Պետրոսեանի (Մխիթար Սեբաստացի) կողմէ: Կաթողիկ հայ եկեղեցականներէ բաղկացած միաբանութիւնը, որ կապեր հաստատած է Պենտիկեան Միաբանութեան հետ, 1717-ին Վենետիկի Սուրբ Ղազար կղզիի վրայ հաստատուած է: Մխիթարեանները առաւել յայտնի են յատկապէս Հին Յունարէն եւ տարբեր արեւելեան լեզուներէ հայերէնի թարգմանութիւններով եւ հայոց պատմութեան, գրականութեան եւ կրօնքի մասին աշխատանքներով: Մխիթարեան Միաբանութիւնը Վիեննա քաղաքին մէջ եւս ունի վանք եւ գրադարան, եւ առաւել կեդրոնացած է հայագիտութեան վրայ: Այս երկու կեդրոնները 2000-ին միացած են միեւնոյն վարչութեան շուրջ:

առանց դադարի հրատարակուած «Բագնավէպ» հանդէսը ամենէն կարեւոր պարբերաթերթերէն մէկը կը համարուի:

Վենետիկի մէջ կը գտնուի Լեոն Պօղոս Ջեքիեանի կողմէ ստեղծուած Հայոց Լեզուի եւ Գրականութեան ամպիոնը, որ մաս կը կազմէ Ca' Foscari համալսարանի Ասիա եւ Հիւսիսային Ափրիկէ բաժնին: 1975-ին Պերկասոյի մէջ արուեստի պատմութեան մասնագէտ Ատրիանօ Ալփագօ-Նովելլոյի կողմէ իրականացուած է հայկական արուեստի մասին գիտաժողով:<sup>6</sup> 1976-ին Ալփագօ-Նովելլոյի կողմէ ստեղծուած Centro Studi e Documentazione della Cultura Armena-ն (Հայկական Մշակոյթի Ուսումնասիրութեան եւ Փաստագրութեան Կեդրոն), որ մեծ մասամբ կեդրոնացած է հայկական ճարտարապետութեան եւ արուեստի պատմութեան վրայ, Վենետիկի եւ Միլանի մէջ իր գործունէութիւններու շնորհիւ մեծ ճանաչում կը վայելէ: Կեդրոնը յատկապէս յայտնի է ճարտարապետութեան մէջ նորոգութիւններու եւ փաստագրելու ծրագիրներով, իսկ 1990-ականներուն իր աշխատանքային ոլորտներուն աւելցուցած է նաեւ հայկական երաժշտութիւնը: Իտալիոյ Պոլոնիա համալսարանին մէջ նաեւ կը գործէ 1973-ին Կապրիէլլա Ուլուիոգիանի կողմէ ստեղծուած Հայոց Լեզուի եւ Գրականութեան Ամպիոն: Կարգ մը այլ համալսարաններ կը դասաւանդեն հայերէնի եւ մշակոյթի դասընթացքներ:

Ֆրանսայի մէջ, ուր հայագիտութիւնը հին պատմութիւն ունի, առաջին կանոնաւոր կրթական ծրագիրը սկսած է 1798-ին Փարիզի մէջ, այդ օրերու անունով Ecole Spéciale des Langues Orientales-ին մէջ (Արեւելեան Լեզուներու Յատուկ Դպրոց), Յակոբ Շահան Չրպետեանի կողմէ իրականացուող հայերէն դասերով: Մինչև օրս INALCO անունով գործող այս հաստատութեան մէջ կը գործէ Հայոց Լեզուի եւ Գրականութեան բաժինը:<sup>7</sup> 1862-էն այս հաստատութեան

6 Հայ Արուեստի Միջազգային Գիտաժողովը երկրորդ անգամ տեղի ունեցած է 1978-ին Երեւանի մէջ, երրորդը՝ 1981-ին Միլանի մէջ, չորրորդը՝ 1985-ին Երեւանի մէջ, հինգերորդը՝ 1988-ին Վենետիկի մէջ:

7 1669 –ին 'Ecole des Jeunes de Langues' [Երիտասարդներու Համար Լեզուի Դպրոց]

մէջ հայերէն դասաւանդած եւ հայոց պատմութեան տարբեր գիրքերու հեղինակ եւ Հայերէն Ֆրանսերէն թարգմանութիւններով յայտնի Էտ Տիլորէրին եւ Կիլիկիոյ պատմութեան վրայ կեդրոնացած Վիքթոր Լոնկլոյային աշխատութիւնները կը համարուին Ֆրանսայի մէջ 19-րդ դարու «Արեւելագիտութեան» կարեւոր յառաջապահները:

Փարիզի École Pratique des Hautes Études-ի մէջ (Գործնական Ուսում-նասիրութիւններու Բարձր Դպրոց) կը գործեն լեզուի եւ մշակոյթի, եւ École des Hautes Études en Sciences Sociales-ի մէջ (Ընկերային-Հասարակական Գիտութիւններու Ուսումնասիրութեան Բարձրագոյն Դպրոց) պատմութեան դասընթացքներ: Փարիզի մէջ գտնուող Bibliothèque nationale de France-ի (Ֆրանսայի Հանրային Գրադարան) եւ INALCO Գրադարանի հայերէնի բաժինները եւ ձեռագիր եւ տետրական արխիւ ունեցող ու 1928-էն մինչեւ օրս գործող Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Նուպար Գրադարանը, Հայագիտական կարեւոր արխիւի եւ փաստագրութեան կեդրոններ կը համարուին:

1920-ին Փարիզի մէջ Ֆրետերիք Մաքլերի եւ Անթուան Մէլէի կողմէ հրատարակուած Revue des Études Arméniennes-ը [Հայկական Ուսումնասիրութիւններու Հանդէս] Երուսալի մէջ կը համարուի հայկական կրօնական եւ մշակութային խմբաւորումներէ անջատ առաջին հայագիտական պարբերաթերթը: Հայկական մշակոյթի, պատմութեան, լեզուի եւ կրօնական կեանքի մասին բազմաթիւ յոդուածներ հրատարակած այս պարբերաթերթը, 1934 թուականին կը դադրի հրատարակուելէ: 30 տարի ետք, 1964-ին Հայկ Պերպլերեանը կրկին կը հրատարակէ նոյն հանդէսը, այս անգամ կեդրոնանալով հայոց նախաարդիական պատմութեան, մշակոյթին, լեզուին եւ կրօնական

անուամբ ստեղծուած այս հաստատութիւնը 1795-ն ստացած է 'Ecole Spéciale des Langues Orientales' [Արեւելեան Լեզուներու Յատուկ Դպրոց] անունը, իսկ 1971-ին ստացած է 'Institut National des Langues et Civilisations Orientales' [INALCO, Արեւելեան Լեզուներու եւ Քաղաքակրթութիւններու Ազգային Դպրոց] անուանումը: Այսօր INALCO-ի յարկին տակ մօտ 100 լեզուի կրթութիւն կը տրուի:

կեանքին վրայ: Պարբերաթերթը, թէկուզ ոչ կանոնաւոր կերպով, բայց կը շարունակէ հրատարակուիլ: Նուպար գրադարանին յարկին տակ, 2013-էն սկսեալ Անգլերէն եւ Ֆրանսերէն հրատարակուող Études arméniennes contemporaines-ը (Ժամանակակից հայկական ուսումնասիրութիւններ) լոյս կը տեսնէ տարեկան երկու անգամ եւ կը համարուի հայագիտական առաջին առցանց պարբերաթերթը, հասանելի ըլլալով բոլոր ընթերցողներու:

Montpellier Համալսարանի մէջ կը գտնուի հայագիտական ամպլիոն, իսկ Aix-Marseille Համալսարանի մէջ՝ Հայկական Ճարտարապետութեան Բաժին: Մարսելի մէջ 1997-ին բարեգործ Ժան Կարպիս Արթինի կողմէ ստեղծուած Association pour la Recherche et l'Archivage de la Mémoire Arménienne-ը (ARAM, Հայկական Յիշողութեան Ուսումնասիրութեան եւ Արխիւի Միութիւն), կը կատարէ պարբերաթերթերու եւ արխիւներու թուայնացման աշխատանք, որ նպատակ ունի փոխանցել Հայկական յիշողութիւնը յաջորդ սերունդներուն: Կեդրոնը՝ իր արխիւի եւ գրադարանի շնորհիւ ուսումնասիրողներուն կ'օգնէ գտնել նոր աղբիւրներ: Պելճիքայի Louvain Կաթոլիկ Համալսարանի (UCL) մէջ բանասէր Ճերարտ Կարիթի (1914-1992) կողմէ ստեղծուած Հայագիտական Ուսումնասիրութիւններու ամպլիոնը, Արեւելագիտական բաժինն մէջ կը կեդրոնանայ հայերէնի լեզուաբանութեան վրայ:

17-րդ դարէն սկսեալ, Ամսթերտամի մէջ Հայկական տպագրութեան զարգացումին զուգահեռ, Հոլանտան դարձած է հայագիտական ուսումնասիրութիւններու հրատարակութեան կեդրոն: Նաեւ 1995-ին լեզուաբան Եոս Ուէյթսպլըրկի (1943-2012) կողմէ Leiden Համալսարանի մէջ ստեղծած է Հայագիտական Բաժին: Այս ամպլիոնը 2009-ին կը դադրի գործելէ: Սակայն համալսարանը կը շարունակէ հայերէնի դասընթացքները:

Չուիցերիոյ մէջ 1974-ին Ժընեւի Համալսարանի յարկին տակ ստեղծուած Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնին մէջ կը գործեն հայերէնի եւ գրականութեան դասընթացքներ:



Երոպայի մէջ հայագիտութեամբ զբաղող առաջին երկրներէն մէկը Անգլիան եղած է: Օքսֆորտի Համալսարանի մէջ 19-րդ դարու ընթացքին սկսած հայերէնի աշխատանքները առաւել զարգացած են աստուածաբան Ֆրետերիք Կոռնվալիս Կոնիքերի կողմէ հայ եկեղեցոյ եւ հայերէն ձեռագիրներու վրայ ուսումնասիրութիւններու շնորհիւ, եւ 1965-ին դարձած է Գալուստ Կիլլպենկեան Հայկական Ուսումնասիրութիւններու Բաժին: Այս բաժինի մէջ նախապէս դասաւանդած է Չարլզ Ճէյմս Ֆրանք Տաուսեթը (1924-1998): Մինչեւ այժմ կը գործեն հայերէնի, գրականութեան եւ պատմութեան Պսակաւոր Արուեստից, բարձրագոյն եւ դոկտորականի ծրագիրները: Դարձեալ Կիլլպենկեան Հաստատութեան օժանդակութեամբ, Լոնտոնի School of Oriental and African Studies-ի (Արեւելեան եւ Ափրիկեան Ուսումնասիրութիւններու Դպրոց - SOAS) Մերձարար Արեւելք եւ Միջին Արեւելք Բաժինին մէջ կը գործեն հայերէնի դասընթացքներ:

Լոնտոնի մէջ իբրեւ անշատ կառոյց, կը գտնուի Կոմիտաս Ինստիտուտը, որ առաւել կեդրոնացած է Տեղասպանութեան եւ պատմութեան ուսումնասիրութեան վրայ: 1992-ին ստեղծուած հաստատութիւնը կը ղեկավարէ Արա Սարաֆեան, որ յայտնի է հրատարակչական գործունէութեամբ, Թուրքիոյ մէջ կազմակերպուած գիտաժողովներուն իր մասնակցութեամբ եւ նման գիտաժողովներու կազմակերպչական աշխատանքներու ընթացքին ցուցաբերած աջակցութեամբ: Մէկ այլ կեդրոն է 2001-ին Լոնտոնի մէջ ստեղծուած Հայ Հիմնարկը (Armenian Institute), որ կը կազմակերպէ զանազան խտացուած Արեւմտահայերէն դասընթացքներ, դասախոսութիւններ եւ ունի գրադարան:

Գերմանիոյ հայագիտական բնագաւառին մէջ 19-րդ դարու առաջատարներէն մէկը կը համարուի բանասէր Հայնրիխ Հիլքշման, ով փաստած է, որ հայերէնը իրանական լեզու չէ, այլ կը համարուի

հնդերոպական լեզուներու ընտանիքի առանձին ճիւղ մը:<sup>8</sup> Բանասէրը յայտնի է նաեւ հայերէնէ գերմաներէն իր թարգմանութիւններով:

Պեոլինի հանրային գրադարանի մէջ (Staatsbibliothek) Արեւելեան Ուսումնասիրութիւններու Բաժինը կը պարունակէ հայերէն արխիւ: Այս բաժինը երբեմն կը կազմակերպէ հայերէնի եւ հայկական մշակոյթի մասին գիտաժողովներ եւ հանդիպումներ: 1977-ին Միւնիխի մէջ Էտուարտ Յովհաննէսեանի (1932-2004) կողմէ ստեղծուած Հայկական Ուսումնասիրութիւններու Հիմնարկը (Institut für Armenische Fragen), հայկական մշակոյթի, արուեստի եւ կրօնական կեանքի մասին ուսումնասիրութիւններով կը ձգտի յաջորդ սերունդներուն փոխանցել հայոց պատմութիւնը: Հիմնարկը 1998-ին Երեւանի մէջ բացած է իր ներկայացուցչական գրասենեակը: Նոյն թուականին Halle-Wittenberg Martin Luther համալսարանի հիմքին վրայ բանասէր Շերման Կոլցի գլխաւորութեամբ ստեղծուած է Մեսրոպ Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնը (Mesrop Zentrum für Armenische Studien): Փոքստամի մէջ Lepsius Haus հաստատութիւնը, որ առաւելապէս կեդրոնացած է Տեղասպանութեան ուսումնասիրութեան վրայ, կը կատարէ նաեւ հայոց պատմութեան մասին աշխատանքներ: Գերմանիոյ մէջ հայագիտութեան բնագաւառի մէջ գործող հաստատութիւններէն մէկը Յուլիանոսեան ծրագիրն է, որ ստեղծուած է 2010-ին Պեոլինի մէջ, եւ իր գործունէութիւնը առաւել կը զարգացնէ համացանցի մէջ հրատարակուած յօդուածներու եւ նկարներու միջոցաւ: Ծրագիրը կը ձգտի Օսմանեան Կայսրութեան սահմաններուն մէջ մնացած Հայկական ժառանգութիւնը երեւան հանել քարտէսներու, յօդուածներու, տեսողական եւ լսողական նիւթերու միջոցաւ:<sup>9</sup>

<sup>8</sup> Heinrich Hübschmann, “Ueber die Stellung des armenischen im Kreise der indogermanischen Sprachen” [Հնդերոպական Լեզուներու Ընտանիքին Մէջ Հայերէնի Դիրքին Մասին], Zeitschrift für vergleichende Sprachforschung auf dem Gebiete der Indogermanischen Sprachen 23/1 (1875), էջ 5-49:

<sup>9</sup> Տե՛ս [www.houshamadyan.org](http://www.houshamadyan.org)

Աստրիոյ մէջ հայագիտութիւնը կեդրոնացած է Վիեննայի մէջ: Մխիթարեաններու Վիեննական ճիւղը, Մխիթարեան Վանքի հիմքին վրայ, 1811-ին սկսած է իրականացնել հայագիտական հրատարակչական աշխատանք: Մեծ արխիւի շնորհիւ ուսումնասիրողներու համար կարեւոր կեդրոն համարուող Վիեննայի Մխիթարեան Վանքը 1887-էն մինչեւ օրս ամէն ամիս կը հրատարակէ «Հանդէս Ամսօրեայ»ն, որ մեծ կարեւորութիւն ունի հայագիտութեան համար: Վիեննայի Համալսարանի Աստրիական-Հայագիտական Միութեան (Österreichisch-Armenische Studiengesellschaft) մէջ կը կազմակերպուին հայոց պատմութեան ու մշակոյթի վերաբերեալ տարբեր հանդիպումներ, իսկ Սալզպուրկի Համալսարանի մէջ կը տրուին հայերէնի դասընթացներ:

Հայերը բնակութիւն հաստատած են Արեւելեան Եւրոպայի քաղաքներուն մէջ (Լեհաստան եւ Ռումանիա) 11-րդ դարէն սկսեալ: Այս հին անցեալը հիմք հանդիսացած է տարածաշրանի մէջ հայոց պատմութեան եւ մշակոյթի ուսումնասիրութիւններուն: Ռումանիոյ Կլուժ-Նափոքա քաղաքի Babeş-Bolyai Համալսարանի եւ Հունգարիոյ մայրաքաղաք Պուտափեշթի Pázmány Péter Կաթոլիկ Համալսարանի մէջ կը գործեն հայագիտական ամպլոններ: Լեհաստանի մէջ հայագիտութեան մէջ, 2010-ին Չամոշ քաղաքին մէջ, եւ 2016-ին Վարշավայի մէջ կազմակերպուած է երկու միջազգային գիտաժողով:<sup>10</sup> Վարշավայի մէջ 2009-էն ի վեր ամէն ամիս Լեհաստանի Հայկական Մշակոյթի եւ Ժառանգութեան Հիմնադրամին կողմէ կը հրատարակուի «Աւետիս» պարբերաբերթը: Թերթը կը հրատարակուի երկու լեզուով (լեհերէն եւ հայերէն) եւ կը կեդրոնանայ հայկական գաղութի պատմութեան, մշակոյթի եւ առօրեայ կեանքին վրայ:

<sup>10</sup> Լեհաստանի եւ Ռոքրանիոյ մէջ հայերու գոյութեան, տարածաշրջնի քաղաքական պատմութեան մասին աշխատանքները տե՛ս. Grzegorz Pelczyński, “Armenians in Poland in the Period of Communism and in the ‘Third Polish Republic’” [Համայնավարութեան եւ Լեհաստանի Երրորդ Հանրապետութեան շրջանին Հայերը Լեհաստանի Մէջ], Our Europe. Ethnography - Ethnology - Anthropology of Culture I (2012), էջ 45-54: www.ptpn.poznan.pl/Wydawnictwo/czasopisma/our/OE-2012-045-054-Pelczynski.pdf

Ամփոփելով ըսենք, որ Եւրոպայի մէջ վաղ շրջանի եկեղեցոյ շուրջ կեդրոնացած գիտութեան արտադրութեան, ինչպէս նաեւ այս գիտական աւանդին վրայ ստեղծուած համալսարանային համակարգին մէջ կը գտնուին հայագիտական կեդրոններ: Այս կեդրոնները եւ կատարուող աշխատանքները, որ Եւրոպայի մէջ համալսարանական համակարգին շնորհիւ առաւել հանրային աղբիւններէ կ’օգտուին, կը կեդրոնանան լեզուաբանութեան, արուեստի պատմութեան եւ գրականութեան վրայ:<sup>11</sup>

<sup>11</sup> Տե՛ս Dickran Kouymjian, “Origins and Development of Armenian Studies in Europe” [Եւրոպայի Մէջ Հայագիտութեան Ակունքները եւ Զարգացումը – Չիրատարակուած զեկոյց], State of Armenian Studies workshop, Michigan University, Ann Arbor, 2011.

## ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԱՄՆ-Ի ՄԷՋ

ԱՄՆ-ի մէջ հայագիտութեան զարգացման ճանապարհը կը բաժնուի երկու մասի՝ հաստատութիւններու հիմնադրութենէն առաջ եւ հաստատութիւններու հիմնադրութենէն ետք: Առաջին շրջանի ընթացքին, որ տեսած է մինչեւ 1940-ականներ, երեսն եկած են տարբեր համալսարաններու գիտնականներու կողմէ հայագիտական անհատական աշխատանքներ: Առաջին աշխատանքները կեդրոնացած են լեզուի ուսուցման վրայ: Գոլումպիա Համալսարանի մէջ 1890-ականներուն հայերէն կը սկսի դասաւանդել Ա. Ուիլիամ Ճէքսընը (1861-1937) եւ կը համարուի այս ոլորտի ռահվիրաներէն մէկը: Անդրանիկ Պետիկեանը (1885-1980) 1930-ականներու ընթացքին Շիքակոյի Համալսարանի մէջ հայերէն դասաւանդած է, ինչպէս նաեւ անդամ եղած է Հայկական Հետազոտութիւններու Ազգային Ընկերակցութեան (NAASR) վարչական մարմնին, որու մասին մանրամասն պիտի անդրադառնանք ստորեւ: Հարվըրտ Համալսարանի մէջ Ռոպերթ Փիրպընդ Պլէյք (1886-1950) 1920-էն սկսեալ 25 տարի հայերէն դասաւանդած է. Փիրպընդ 1940-ականներուն եղած է Հայ Ամերիկեան Մշակութային Միութեան (AACA) պատուոյ նախագահ:

Հաստատութիւններու հիմնադրութենէն առաջ, բացի լեզուի ուսուցումէն, այլ աշխատանքներ եւս արձանագրուած են: Հարվըրտ Համալսարանի Պատմութեան Անպիռնի դեկավար եւ NAASR-ի հիմնադիր պատուոյ անդամ Ուիլյամ Լ. Լէնկըր (1896-1977) իր դասերու եւ ուսումնասիրութիւններու մէջ ներկայացուցած է Հայկական Հարցը՝ պատմական եւ քաղաքական մօտեցումներով: Արուեստաբան Միրարփի Տէր Ներսէսեանը (1896-1989) Սորպոնի Համալսարանի մէջ սկսած իր գործունէութիւնը 1930-էն սկսեալ ծաւալած է ԱՄՆ-ի մէջ: Ան Ուէլլիսի եւ Հարվըրտ համալսարաններու մէջ դասաւանդած է Հայկական եւ Բիզանդական մշակոյթի դասեր: ԱՄՆ-ի համալսարաններու մէջ զարգացող այս անհատական

աշխատանքները տարբեր կառոյցներու միջոցաւ հայագիտութեան աջակցելու եւ զայն ակադեմական մակարդակի բերելու ջանքերը 1940-ականներուն առաւել թափ ստացած են: Այս ջանքերուն մէջ մեծ դեր խաղցած են գիտաժողովները: Հայ Ամերիկեան Մշակութային Միութիւնը, Գոլումպիա Համալսարանի Արեւելան Եւրոպայի Լեզուներու Բաժինին հետ միասին 1945-ին կազմակերպած է Հայկական Մշակոյթի Գիտաժողով, որ շատ մեծ արձագանգ ունեցած է: Այս գիտաժողովին ներկայ գտնուած են 1946-էն Armenian Quarterly պարբերաբերթի հիմնադիր բանաստեղծ Կոստան Չարեանը (1885-1969), լեզուաբան Ճովիանո Պոնֆանտէն (1904-2005), Միրարփի Տէր Ներսէսեանը, պատմաբան Հէնրի Կրէկորին (1881-1964) եւ այլք:

1950-ականներէն սկսեալ Հայկական Ուսումնասիրութիւններու բնագաւառին մէջ արձանագրուող զարգացումները պատճառ հանդիսացած են, որ Հայոց Տեղասպանութիւնը դառնայ գիրքերու եւ գիտաժողովներու նիւթ: Այս ընթացքին Հայ Դատի Յանձնախումբի (Armenian National Comitee of America - ANCA) իրագործած քաղաքական եւ ակադեմական գործունէութիւններով, Տեղասպանութեան հետ առնչուող խնդիրները, ակադեմական եւ ոչ ակադեմական հարթակներու վրայ առաւել կանոնաւոր կերպով սկսած են ուսումնասիրուիլ: Այս առումով զարգացող աշխատանքները 1965-ին Տեղասպանութեան 50-րդ տարելիցին կազմակերպուած զանազան յիշատակի միջոցառումներէն եւ նիւթը առաւել երեւելի դարձնելուն ուղղուած քաղաքական ձեռնարկներէն ետք կը շարունակեն իրենց գոյութիւնը իբրեւ ԱՄՆ-ի հայագիտութեան բնագաւառին մէջ գլխաւոր միտում:

1956-ին, ԱՄՆ-ի մէջ հայագիտութիւնը առաւել մանրամասն ակադեմական գիտակարգ դարձնելու պատճառով ստեղծուած Հայագիտութեան Չարգացման Հասարակութեան (Society for the Advancement of Armenian Studies - SAAS) նպատակը համալսարաններու մէջ հայոց պատմութեան, մշակոյթի եւ լեզուի դասընթացքները աւելի

նկատառելի դարձնելու համար, ամպիոններ եւ բաժիններ հիմնելով՝ հայագիտութեան բնագաւառը զարգացնելն է: SAAS-ի նպատակներու եւ սկզբունքներու կողքին, լեզուաբան եւ պատմաբան Ռիչըրտ Ն. Ֆրայ (1920-2014), Հարվըրտ Համալսարանի Միջին Արեւելեան Ուսումնասիրութիւններու Կեդրոնի իր դասերուն մէջ Հայկական մշակոյթի եւ պատմութեան՝ գիտական ասպարէզ ներառելու կարեւորութիւնը շեշտած է: Այս պնդումներու ազդեցութեամբ, 1955-ին հայագիտութեան աշակցելու եւ հայագիտութեան ակադեմական նկարագիրը նկատառելի դարձնելու նպատակով ստեղծուած է National Association for Armenian Studies and Research-ը [NAASR, Հայկական Ուսումնասիրութիւններու Ազգային Ընկերակցութիւն]:<sup>12</sup> NAASR-ը ստեղծուած է այն նպատակով, որ ԱՄՆ-ի հայագիտութիւնը դառնայ գիտական ոլորտի մաս: Պատմաբան Արա Աւագեանի գլխաւորութեամբ, մեծ մասամբ Հարվըրտ Համալսարանի անդամ ուսումնասիրողներու կողմէ ստեղծուած NAASR-ի գործունէութիւնները շրջադարձային եղած են: NAASR-ը 1959-ին Հարվըրտ Համալսարանին մէջ ստեղծած է «Մաշտոց» Հայկական Ուսումնասիրութիւններու Ամպիոնը, իսկ 1961-ին այս ամպիոնին մէջ սկսած են դասընթացներ:

NAASR-ը օժանդակած է հաստատման՝ 1969-ին Լոս Անճելըսի Գալիֆորնիա Համալսարանի մէջ (UCLA) Նարեկացի Հայոց Լեզուի եւ Մշակոյթի Ամպիոնին ու 1979-ին Գոլոմպիա Համալսարանի Միջին Արեւելք, Հարաւային Ասիա եւ Ափրիկէի կեդրոնին մէջ Հայոց Պատմութեան եւ Քաղաքակրթութեան Ամպիոնին: UCLA Ժամանակակից Հայոց Պատմութեան Ամպիոնի հիմնադիր Ռիչըրտ Յովհաննիսեան, Հարաւային Գալիֆորնիա Համալսարանին մէջ

<sup>12</sup> NAASR-ի հիմնադրման սկզբունքներու եւ ԱՄՆ-ի մէջ Հայագիտութեան մասին տե՛ս Marc Mamigonian, “From Idea to Reality: The Development of Armenian Studies in the U.S. from the 1890s to 1969” [Կատարեալէն Իրականութիւն՝ Ամերիկայի Մէջ Հայագիտութեան Չարգացումը 1890-ականներէն մինչեւ 1969], *Journal of Armenian Studies* X, 1&2 (2012, 2013), էջ 153-184: Մանուկեանի գեկուցման երիզը տե՛ս [www.youtube.com/watch?v=uLfsqOxP\\_cM](http://www.youtube.com/watch?v=uLfsqOxP_cM)

երկար տարիներ խորհրդական եղած է Շոահ Հիմնարկի (Shoah Foundation): Շոահ Հիմնարկը 1970-ականներէն սկսեալ 1915-էն փրկուած հայերու վերաբերեալ բանաւոր պատմութեան աշխատանքներ տարած է: Այս աշխատանքի շնորհիւ ստեղծուած են կարեւոր բանաւոր պատմութիւն եւ վկաններու պատմածներէն բաղկացած արխիւ: 2011-ին՝ Ռիչըրտ Յովհաննիսեանի պաշտօնաթողումէն ետք ամպիոնը ստացած է իր անունը: NAASR-ն օժանդակած է նաեւ ԱՄՆ-ի այլ համալսարաններու մէջ հայագիտութեան զարգացման, հայերէնի եւ հայոց պատմութեան դասընթացներու ստեղծման: Այս շրջանին, 1980-ականներուն Գալիֆորնիա Ֆրեզնօ, Գալիֆորնիա Նորթրիճ, Միչիկըն Անն Արպըր, Միչիկըն Տիրպորն եւ Հարաւային Գալիֆորնիա համալսարաններուն մէջ ստեղծուած են հայագիտական ամպիոններ:

1985-ին պատմաբան Տենիս Փափագիանի գլխաւորութեամբ ստեղծուած Միչիկըն Տիրպորն Համալսարանի հայագիտական կեդրոնի առաջին նպատակն է ուսումնասիրութիւն կատարել Հայոց Տեղապանութեան եւ հայերու վերաբերեալ, եւ ստեղծել գիտական-փաստագրական կեդրոն, որ կը ծառայէ ուսանողներու, մասնագէտներու, ակադեմականներու եւ ընդհանուր հասարակութեան: Միչիկըն Անն Արպըր Համալսարանի մէջ, Հայկական մշակոյթի, լեզուի եւ պատմութեան վերաբերեալ հետազոտութիւններու զարգացման նպատակով ստեղծուած Հայկական Ուսումնասիրութիւններու Ծրագիրին հովանաւորութեան ներքոյ 1981-ին ստեղծուած է Ալեքս Մանուկեան Հայոց Պատմութեան Ամպիոնը, իսկ 1987-ին ստեղծուած է Մարի Մանուկեան Հայոց Լեզուի եւ Գրականութեան Ամպիոնը:

Գալիֆորնիայի Նորթրիճ Պետական Համալսարանի Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնը ստեղծուած է դարձեալ Փափագեանի կողմէ, ով նպատակադրած էր հայագիտական կեդրոն մը հիմնել համալսարանի մը շեմէն ներս, սակայն որպէս անջատ հաստատութիւն: 2005-էն գործող կեդրոնին գլխաւոր նպատակն է

ԱՄՆ-ի տարբեր համալսարաններու մէջ քաջալերել Հայկական Ուսումնասիրութիւնները եւ պատրաստել ակադեմականներ:<sup>13</sup>

ԱՄՆ-ի մէջ կը գործեն նաեւ հայագիտական կեդրոններ, որոնք մաս չեն կազմեր ակադեմական համակարգին: Ասոնցմէ ամենէն յայտնին Հայկական Ուսումնասիրութիւններու Ընկերակցութիւնն է (Society for Armenian Studies - SAS), որուն կեդրոնը կը գտնուի Ֆրեզնո քաղաքին մէջ եւ տեղի Պետական Համալսարանին հետ համատեղ ծրագիրներ կ'իրականացնէ: Ռ-իչըրտ Յովհաննիսեանի, Տիգրան Գոյումճեանի, Նինա Կարստեանի, Աւետիս Սանճեանի, Ռոպերթ Թոմսոնի եւ այլ ակադեմականներու կողմէ, 1974-ին ստեղծուած ընկերակցութիւնը իր Հայկական Ուսումնասիրութիւններու Ընկերակցութեան Հանդէս (Journal of Society for Armenian Studies) պարբերաբերքի, հրատարակուող գիրքերու եւ գիտաժողովներու շնորհիւ մեծ ներդրում ունեցած է հայագիտութեան մէջ:

1997-ին Ուաշինկթոնի մէջ նուիրատու չրայր Հովանեանի կողմէ ստեղծուած Armenian National Institute-ը (ANI, Հայկական Ազգային Ինստիտուտ), որուն նպատակը եղած է քաջալերել Հայոց Տեղասպանութեան վերաբերեալ աշխատանքները եւ հետազոտութիւնները: Մինչեւ օրս կը շարունակէ գործունէութիւնը:

1982-ին Կրեյկ Սարգիսեանի, Ժիրայր Լիպարիտեանի, Կարպիս Քորթեանի եւ Նորա Ներսէսեանի կողմէ Cambridge Massachusetts-ի մէջ ստեղծուած Զօրեան Հիմնարկը ԱՄՆ-ի մէկ այլ անջատ հաստատութիւն է: Գլխաւոր նպատակը մարդու իրաւունքներու, Տեղասպանութեան եւ Սփիւռք-Հայաստան յարաբերութիւններու վերաբերեալ ուսումնասիրութիւններուն զարկ տոտող աշխատանքներու իրականացումն է: Ան կը քաջալերէ անկախ ուսումնասիրողները

<sup>13</sup> Գիտական ոլորտի եւ յատկապէս California State University, Northridge-ի մէջ հայագիտութեան մասին տե՛ս Mary A. Papazian, “Armenian Studies: Past, Present, and Future” [Հայագիտութիւն՝ Անցեալ, Ներկայ, Ապագայ], 11 Մայիս 2013: tr.scribd.com/doc/309934223/CSUN-30th-AnniversarCSUN-30th-Anniversary-Talk-on-Armenian-Studies-Talk-on-Armenian-Studies-May-11-2013

եւ մասնագէտները, որ միջգիտակարգային մոտեցումով, մաս կազմեն որակեալ ակադեմական կեանքին: Հաստատութիւնը կը կեդրոնանայ Տեղասպանութենէ փրկուած հայերու 1915-ի եւ անկէ առաջ յիշողութիւններու վրայ եւ մեծ կարեւորութիւն կու տայ բանաւոր պատմութիւնը հանրութեան հասանելի դարձնելու աշխատանքներուն: Կը կազմակերպէ նաեւ տարբեր գիտաժողովներ: Հիմնարկը 1984-ին փոխադրուած է Թորոնթո, Գանատա:

1915-ին սպանուած հայ մտաւորական, երեսփոխան Գրիգոր Զօհրապին աղջկան՝Տոյրէս Զօհրապ Լիպանին ջանքերուն շնորհիւ 1987-ին Նիւ Եորքի մէջ ստեղծուած Զօհրապ Կեդրոնը ունի գրադարան, արխիւ եւ առցանց գրացուցակներ: Կեդրոնը կը կազմակերպէ նաեւ գիտաժողովներ եւ կ'օժանդակէ հայագիտութեան տարածման, կը կատարէ հրատարակութիւններ:

Չուգահեռական սը կարելի է տանիլ երկու երեւոյթներու միջեւ, առաջինը՝ ԱՄՆ-ի մէջ հայագիտութեան տեսանելի դառնալուն եւ համալսարաններու մէջ ակադեմական մակարդակի հասնելուն, երկրորդը՝ տեղական հայ գաղութի նոր սերունդին մօտ հայոց պատմութեան եւ իրենց ընտանիքներու անցեալին նկատմամբ հետաքրքրութեան աւելնալուն: Տեղասպանութեան Ուսումնասիրութիւններու միջոցաւ թափ ստացած հայագիտութիւնը, յատկապէս 1965-էն ետք կատարուած ուսումնասիրութիւններուն միջոցաւ, կարեւոր գործօն հանդիսացած է տեղի գաղութի ինքնութեան ձեւաւորման նոր ընթացքին համար:<sup>14</sup>

<sup>14</sup> Նոյն



## ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԷՋ

Լիբանանեան իրականութեան մէջ, Արեւմտահայերէնը ունի առօրիաօգտագործում: Հայկական թատրոնի եւ երաժշտութեան խումբերը, հայոց պատմութեան եւ մշակութային ցուցադրութիւնները կը համարուին հայերու կեանքի անբաժան մասնիկը:

Լիբանանի մէջ կը գործեն հայագիտութեամբ զբաղող շատ կեդրոններ: Ասոնցմէ մէկը 1955-ին հիմնուած եւ 1996-ին համալսարանի կարգավիճակ ստացած Հայկագեանն է: Պէյրութի մէջ գտնուող այս համալսարանը ունի հայագիտական ամպլոն եւ գրադարան:<sup>15</sup> Հայագիտական Ամպլոնը 1970-էն սկսեալ ամէն տարի կը հրատարակէ «Հայկագեան Հայագիտական Հանդէս»ը՝ հայերէն եւ անգլերէն: 2005-էն, յատկապէս Միջին Արեւելքի հայերու մասին գիտաժողովներ կազմակերպող համալսարանը 2012-ին ստեղծած է Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնը: Լիբանանի մէջ գործած է նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան կողմէ 1974-ին ստեղծուած ՀԲԸՄ Երուանդ Հիւսիսեան Հայագիտական Հիմնարկը: Նախապէս Հիմնարկին ուսումնական ծրագիրը եղած է չորս տարի, ապա կրճատուած է երկու տարուան, իսկ 1994-ին դադրած է անոր գործունէութիւնը հաւատարմագրման խնդիրներու պատճառով: Համագային Հայկական Կրթութեան եւ Մշակոյթի Կեդրոնին կողմէ 1974-ին հիմնուած՝ հայերէնի եւ հայոց պատմութեան ոլորտի ակադեմական ծրագիրներով բազմաթիւ մանկավարժներ պատրաստած Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի գործունէութիւնը նոյն հաւատարմագրման խնդիրներու պատճառով: Սան Ժոզէֆ համալսարանի մէջ մինչեւ 1975 գործած է հայագիտական ուսումնական ծրագիր:

<sup>15</sup> Հայկագեան Համալսարանի՝ հիմնադրութենէն մինչեւ օրս գործունէութեան վերլուծութիւնը տե՛ս Տիգրան Ղանալանյան, Պէյրութի Հայկագեան Համալսարանը, Նորավանդ: [www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=6947&phrase\\_id=65916](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6947&phrase_id=65916)

Համալսարաններէն գատ Լիբանանի մէջ կը գործեն հաստատութիւններ, որոնք կեդրոնացաւ են Հայկական մշակոյթի եւ պատմութեան ուսուցման վրայ՝ մանկավարժներ պատրաստելու համար: Ասոնցմէ մէկը Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոնն է, որ հիմնուած է 1987-ին՝ հայագիտական այլ հաստատութիւններու հետ համագործակցաբար, երեք տարի տեւող ծրագրի միջոցաւ մանկավարժներ պատրաստելու նպատակով:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կից հայագիտական կեդրոնը եւ գրադարանը կը նպատակադրեն զարգացնել յատկապէս մանկավարժներու հայոց պատմութեան եւ մշակոյթի գիտելիքները՝ շարունակական կրթական ծրագիրներու, Հասկ Հայագիտական պարբերաթերթի եւ այլ հայագիտական հրատարակութիւններու միջոցաւ:

Գալով Սուրիա, այստեղ մեծ թիով հայեր 1915-էն ետք հաստատուած են՝ յատկապէս Հալէպ քաղաքի մէջ: Հայերը բնակութիւն հաստատած են նաեւ Գամիշլի, Դամասկոս, Լաթաքիա եւ Քեսապ քաղաքներու մէջ եւ հիմնած են տարբեր կեդրոններ, անոնց կարգին նաեւ հայագիտական:

Այս հաստատութիւնները կը նպատակադրեն ակադեմական մակարդակէն գատ հոգալ ընկերային կարիքներ եւ: Գաղութային հաստատութիւնները կը տրամադրեն մշակոյթային ինքնութեան պահպանութեան ուղղուած կրթութիւն: Այս հաստատութիւններուն յառաջապահները եղած են Համագային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւնը, Թէքէեան Մշակութային Միութիւնը եւ Կիլիկիեան Մշակութային Միութիւնը:

«Գեղարդ» Սուրիահայ Տարեգիրքը, որու գլխաւոր խմբագիրները եղած են Ռոպերթ Ճէպէճեանը եւ Հայկ Պարիկեանը, 1975-2000 ընթացքին հրատարակած է 6 հատոր: «Գեղարդ» տարեգիրքի մէջ տեղ գտած են Հայկական Մշակոյթի եւ պատմութեան վերաբերեալ յօդուածներ: Նայիրի պարբերաթերթը, որ ստեղծուած է գրող-գրականագէտ Անդրանիկ Ծառուկեանի կողմէ, 1941-1949 ընթացքին

հրատարակում է ամեն ամիս: 1952-1982 ընթացքին գործունեությունը շարունակված է Պէյրոսի մէջ եւ Հալէպի հայկական մշակոյթի մէջ մեծ դեր խաղցած է: Հալէպահայ Գրողներու Միութեան կողմէ 2005-էն հրատարակուող «Երթ» գրական հանդէսի եւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդարանի կողմէ 2008-էն հրատարակուող հայագիտական «Տարբե» պարբերաբերթի գործունեությունը խափանուած է 2011-ին, Սուրիոյ քաղաքացիական պատերազմի պատճառով:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կից Սրբոց Յակոբեանց Վանքը, որ ունի ձեռագիրներու հաւաքածոյ, Հայագիտութեան համար կարեւոր կեդրոն է: Կեդրոնը 1866-1867-ին հրատարակած է «Միոն» պարբերաբերթը, 1927-ին դարձեալ սկսած է հրատակակությունը Եդիշէ Գուրեանի ջանքերով եւ հասած է մինչեւ մեր օրերը: Երուսաղէմի Եբրայական Համալսարանի մէջ, Միքայէլ Է. Սթօնի կողմէ 1969-ին հիմնուած հայագիտական ծրագիրը կը շարունակէ գործունեությունը մինչեւ օրս:

Եգիպտոսի մայրաքաղաք Գահիրէի մէջ Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը, հայագիտական ուսումնասիրութեամբ զբաղողներուն կը տրամադրէ ուսումնաթոշակներ եւ ունի հայագիտական գրադարան: Արշակ Ալպոյաճեանը, որ իր աշխատասիրություններուն մէջ կը կեդրոնանայ հայերու առօրեայ կեանքին վրայ, իր ամենէն կարեւոր գիրքերը՝ Պատմութիւն Հայ Կեսարիոյ (երկու հատոր, 1937), Պատմութիւն Հայ գաղթականութեան (1941) եւ Պատմութիւն Եվրոկիոյ Հայոց (1952), հրատարակած է Գահիրէի մէջ:<sup>16</sup> Գահիրէի մէջ, վերջին տարիներուն հայագիտությունը ստացած է գիտակարգային հանգամանք: Գահիրէի Համալսարանի մէջ 2014-ին հիմնուած Հայկական Ուսումնասիրություններու Կեդրոնը կը նպատակադրէ ընդլայնել հայոց պատմութեան եւ մշակոյթի մէջ ակադեմական մակարդակի աշխատանքները: Այս նպատակով

<sup>16</sup> Yervant Gobelyan, “Halkın tarihini kaydettiler” [Արձանագրած է ժողովուրդին Պատմությունը], Ակօս 347, 22 Նոյեմբեր 2002:

2016-ին կազմակերպուած է գիտաժողով «Արաբական Աշխարհի մէջ Հայկական Ուսումնասիրություններու Ապագան» խորագիրով:

Պարսկաստանի մէջ եւս հայագիտությունը վերջին տարիներուն ստացած է նոր թափ: Արխիւներու ճիշդ օգտագործման եւ մատենագիտացման աշխատանքները առաջ տանելու համար, 1960-ին հիմնադրուած Իսֆահան Համալսարանի Հայոց Լեզու եւ Պատմութիւն Բաժինը կը համագործակցի Նոր Զուղայի Սուրբ Ամենավերկիչ Վանքի հետ: 1995-ին Թեհրանի Իսլամական Ազատ Համալսարանին մէջ, իսկ 2011-ին Թեհրանի Համալսարանին մէջ բացուած են հայագիտական բաժիններ:

## ՌՈՒՄԻՈՅ, ՈՒՔՐԱՆԻՈՅ ԵՒ ՎՐԱՍԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Ռուսիան, Ուքրանիան եւ Վրաստանը կը համարուին կեդրոններ, որ պատմականօրէն Հայկական մշակոյթը եւ հետեւաբար հայագիտութիւնը միշտ մեծ առաջընթաց ապրած է:

Ռուսիոյ մէջ, որ մօտաւորապէս 2.5 միլիոն հայ կ'ապրի, յատկապէս համալսարաններու յարկին տակ հայոց պատմութեան եւ մշակոյթի վերաբերեալ բազմաթիւ ծրագիրներ կան: Փեթերսպուրկի եւ Մոսկուայի Պետական համալսարաններուն կից Ասիա եւ Ափրիկէ Ուսումնասիրութիւններու կեդրոններու մէջ հայերէն կը դասաւանդուի: Արեւելեան Ձեռագիրներու Հաստատութիւնը, Ռուսիոյ Գիտութիւններու Կաճառը, Ուռալի Դաշնային Համալսարանը եւ Նիժնի Նովկորոտի Համալսարանը՝ բաժիններու եւ յատուկ ծրագիրներու միջոցաւ ուղղակիորէն կը դասաւանդեն հայագիտութիւն:

Աւելին, Մոսկուայի մէջ Հայ Առաքելական Եկեղեցոյ Կեդրոնը ունի գրադարան եւ կ'իրականացնէ հայերէնի, հայոց պատմութեան եւ մշակոյթի դասընթացքներ: Նիժնի Նովկորոտի մէջ կը գտնուի Հայ Միութիւնը, որ կ'իրականացնէ հայերէնի եւ հայոց պատմութեան կրթական ծրագիրներ:

Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը կը համարուի այն կեդրոններէն մէկը, որ կարեւոր քայլեր ձեռնարկուած են հայագիտութեան մէջ: Այստեղ 1895-1916 ընթացքին հրատարակուած է «Ազգագրական Հանդէս»ը, որ ուշադրութիւնը կեդրոնացուցած է հայոց պատմութեան եւ հայերու առօրեայ ընկերային կեանքի վրայ: Հանդէսին խմբագիրը եղած է Երուանդ Լալանեանը: Հանդէսի ստեղծման աշակից դարձած են ճարտարապետ Թորոս Թորամանեանը եւ եկեղեցական-հայագէտ Գարեգին Յովսէփեանը (1943-ին դարձած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս՝ Գարեգին Ա): Թիֆլիսի Մանկավարժական Համալսարանի մէջ 1939-ին բացուած է հայերէնի բաժինը, յետագային

տեղափոխուած Իլիա Ճավճավաժէի անուան Օտար Լեզուներու եւ Մշակոյթներու Պետական Համալսարան: Սոյն բաժինին մէջ մինչեւ օրս կը դասաւանդուի հայերէն:<sup>17</sup>

Քիւնի Պետական Համալսարանի մէջ կը գործէ Հայկական Ուսումնասիրութիւններու Անպիոնը:<sup>18</sup> Ուքրանիոյ Հայ Միութեան յարկին տակ, կը գործէ Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոն:

Ռուսիոյ, Ուքրանիոյ եւ Վրաստանի մէջ հայագիտութիւնը կը տարբերի Երուսալի եւ ԱՄՆ-ի իրականութենէն՝ ֆինանսապէս եւ նիւթերու ու ծրագիրներու ընտրութեան առումով: Այն հայկական բարեգործական կազմակերպութիւնները, որոնք կը գործեն Երուսալի եւ յատկապէս ԱՄՆ-ի մէջ, եւ մեծ կարեւորութիւն ունին հայագիտութեան համար, նախկին խորհրդային պետութիւններու շեմէն ներս սահմանափակ գործունէութիւն կը ծաւալեն: Կը նկատուի, որ նշուած երկիրներու մէջ հայկական ուսումնասիրութիւններու զարգացումը առաւել ենթակայ է հանրային աղբիւրներուն: Նաեւ կը նկատուի, որ հետազօտական կեդրոնները կը զարգանան քաղաքական նախաձեռնութիւններու շնորհիւ եւ մեծ մասամբ աշակցութիւն կը ստանան պետութիւններու միջեւ համաձայնութիւններով եւ ունին կիսա-քաղաքական նկարագիր:

Այս հանգամանքներու շնորհիւ նախկին խորհրդային պետութիւններու մէջ հայագիտութեան մէջ կը գերակշռէ հասարակութիւններու եւ պետութիւններու գործնական կարիքներու բաւարարումին ուղղուած եւ լեզուի ու մշակոյթի ուսուցումի վրայ կեդրոնացած մօտեցում:

17 Մանրամասնութիւններու համար տե՛ս Թամարա Վարդանյան, Թիֆլիսի Հայկական Դպրոցները՝ Պատմութեան Աւարտ, Նորավանք:

18 Վահրամ Հովյան, Հետխորհրդային Երկրների Հայագիտական Կենտրոնները, Նորավանք: [www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=13159&sphrase\\_id=65921](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13159&sphrase_id=65921)



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի մէջ հայագիտութիւնը զարգացած է երեք գլխաւոր հաստատութիւններու շնորհիւ. 1919-ին հիմնուած Երեւանի Պետական Համալսարանը, 1943-ին ԽՍՀՄ Գիտութիւնների Ակադեմիայի Հայաստանեան մասնաճիւղը (1993-ին՝ Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային Ակադեմիա), եւ 1959-ին Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Ձեռագիրների Ինստիտուտ - Մատենադարանը:

Հայաստանի մէջ հայագիտութիւնը կը ներառէ հայոց պատմութեան եւ մշակոյթի ուսումնասիրութիւնները, ինչպէս նաեւ պետութեան առօրեայ քաղաքական իրողութիւնները եւ դրացի պետութիւններու հետ յարաբերութիւնները: Այս առումով Հայաստանի մէջ հայագիտութիւնը կը նկատուի քաղաքագիտութեան բաժին մը եւ կը համարուի ոլորտ մը, ուր տարբեր պետական կառոյցներ ունին խօսքի իրաւունք:

Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիան եւ Երեւանի Պետական Համալսարանը 2003-ին Երեւանի մէջ կազմակերպած են Առաջին Միջազգային Հայկական Ուսումնասիրութիւններու Համաժողովը, որ համախմբած է մեծ թիւով հայագէտներ: Համաժողովը հայագիտութեան զարգացման համար կարեւոր քայլ մը եղած է եւ անոր ազդեցութիւնը շարունակուած է յաջորդ տարիներու ընթացքին: Հայագիտութեան մէջ մէկ այլ կարեւոր քայլ եղած է 2012-ի Յունուարին՝ 2012-2025 տարիներու ընթացքին Հայկական Ուսումնասիրութիւններու զարգացման համար կազմուած ռազմավարութեան փաստաթուղթը: Փաստաթուղթի մէջ տեղ գտած որոշումներու համաձայն 2012-ին հիմնուած է հայագիտութեան աջակցութեան հիմնադրամ:

Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութենէն ետք, վերոյիշեալ 3 «հիմնադիր» հաստատութիւններէ զատ հայագիտութեան մէջ մեծ դեր խաղցած կարեւոր կեդրոնները եղած են Տեղասպանութեան Թանգարանը, Շիրակ Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնը, Արովեանի անուան Հայկական Մանկավարժական Համալսարանը, Կոմիտասի անուան Պետական Երաժշտանոցը, Նորավանք

գիտա-կրթական կեդրոնը, Ռազմավարական Հետազոտութիւնների Արարատ Կեդրոնը, եւ այլ կարեւոր կեդրոններ:<sup>19</sup>

Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիան, թէ ըլլալով հիմնուած աւելի վաղ միւս կառոյցներէն եւ թէ հետազոտական եւ արխիւային կարողութիւններուն շնորհիւ մեծ ներդրում ունեցած է հայագիտութեան մէջ: Ակադեմիան, հայագիտութեան բաժինին կից 9 հետազոտական կեդրոններ ունի՝ Պատմութիւն, Լեզու, Գրականութիւն, Ձեռագիրներ, Արուեստ, Տնտեսագիտութիւն, Փիլիսոփայութիւն, Արեւելագիտութիւն եւ Տեղասպանագիտութիւն, որոնցմէ զատ իր յարկին տակ կը գործեն նաեւ Շիրակ Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնը եւ ակադեմական հրատարակչութիւնը: Ակադեմիան, ուր կ'աշխատին հարիւրավոր գիտնականներ, Հայաստանի մէջ կը համարուի հայագիտութեան ամենէն հարուստ կեդրոնը:<sup>20</sup>

Երեւանի Պետական Համալսարանը նոյնպէս մեծ դեր խաղցած է Հայաստանեան հայագիտութեան զարգացման մէջ: Բանասիրութեան եւ լեզուաբանութեան մասնագէտներ Ստեփան Մալխասեանցը (1857-1947), Հրաչեայ Աճառեանը (1876-1953) եւ Մանուկ Աբեղեանը (1865-1944) այստեղ կատարած են իրենց ուսումնասիրութիւնները:<sup>21</sup>

Մատենադարանը, ձեռագիր մատենաներու հսկայական արխիւով, հայագիտութեան վրայ կեդրոնացած գանազան նիւթերու ուղղւած բաժանմունքներով, եւ 2017-ի տուեալներու համաձայն 140 գիտաշխատողներու եւ 337 աշխատակազմով կը համարուի հայագիտութեան ամենէն կարեւոր կեդրոններէն մէկը:<sup>22</sup>

19 Fundamental Armenology, “Editorial” [Խմբագրական]: [www.fundamentalarmenology.am/Article/1/116/EDITORIAL.html](http://www.fundamentalarmenology.am/Article/1/116/EDITORIAL.html)

20 Եւրի Մ. Մովսիսյան, Հայագիտութեան Արդի Վիճակը Հայաստանում եւ Չարգացման Հիմնախնդիրները, հրատարակուած այստեղ՝ Հայագիտութիւնը եւ Արդի Ժամանակաշրջանի Մարտահրաւրները՝ Հայագիտական Միջազգային Երկրորդ Համաժողով, Երեւան, Գիտութիւն, 2014:

21 Նոյն

22 Նոյն

1991-ին Հայաստանի անկախացումէն ետք, հայագիտութեան մէջ մեծ զարգացում նկատուած է: Այս ընթացքին մեծ թիով հաստատութիւններ եւ հետազոտական կեդրոններ հիմնուած են: 2008-ին Երեւանի Պետական Համալսարանի հիմքի վրայ հիմնուած Հայկական Հետազոտութիւններու Ինստիտուտին մէջ կը գործեն Մագիստրոսական եւ Դոկտորական աստիճանի ծրագիրները եւ կը հրատարակուի «Հայագիտութեան Հարցեր» պարբերաթերթը:

Հայաստանի մէջ հայագիտութեան ամենէն կարեւոր աշխատութիւններէն մէկն է Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի կողմէ 1974-էն մինչեւ 1986, 13 հատորով հրատարակուած Հայկական Սովետական Հանրագիտարանը: Այս համայնագիտարանը կը պարունակէ նիւթեր Հայ Եկեղեցոյ պատմութեան, հայերէնի, Սփիւռքի եւ Հայոց Տեղասպանութեան վերաբերեալ: Այս համայնագիտարանէն զատ Հայաստանի մէջ երկու կարեւոր պարբերաթերթ մեծ դեր խաղցած են հայագիտութեան զարգացման մէջ: Տարեկան երեք հատոր հրատարակուող «Լրաբեր Հասարակական Գիտութիւնների» պարբերաթերթը, որուն առաջին հատորը լոյս տեսած է Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիային կողմէ, 1940-ին: Երկրորդ, 1958-էն դարձեալ Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի կողմէ հրատարակուող եւ հին եւ արդի հայոց պատմութեան, լեզուի եւ գրականութեան վրայ կեդրոնացող Պատմա-Բանասիրական Հանդէս պարբերաթերթը: Հայաստանի մէջ հայագիտութեան զարգացման մէջ մեծ ներդրում ունեցած են հետեւեալ հրատարակութիւնները՝ 1940-էն հրատարակուող «Բանբեր Մատենադարանի»ն, 1967-էն հրատարակուող «Բանբեր Երեւանի Համալսարանի»ն, Հայոց Կաթողիկոսարանի կողմէ 60 տարի է ի վեր հրատարակուող «Էջմիածին» պարբերաթերթը եւ 2014-էն 5 լեզուով հրատարակուող «Բանբեր Հայագիտութեան» ակադեմական պարբերաթերթը:

## ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Օսմանեան Կայսրութեան ժամանակաշրջանին հայագիտութեան հիմքերը կրնանք գտնել պատմագէտ Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի (1637-1695), Պալաթը Գէորգ Դպիրի (1737-1812), Ղուկաս Ինճիճեանի (1758-1833), Համբարձում Լիսնոնճեանի (1768-1839), Գրիգոր Փեշթեմալճեանի (1773-1837), Մինաս Բժշկեանի (1777-1851), Մատթիա Քարաքաշեանի (1818-1903) եւ այլ հայագէտներու՝ հայերէնի, հայոց պատմութեան եւ մշակոյթի վերաբերեալ աշխատութիւններու մէջ:

20-րդ դարու սկիզբը հայագիտութեան մէջ ներդրում ունեցած անձնատրութիւնները, այն հայ մտաւորականներն են, որ ձեռով մը կրցած են վերապրիլ 1915-էն ետք: Այս մտաւորականները, որ հայրենիքէն հեռու կը փորձէին գործել որպէս մտաւորականներու փոքր խումբ, կը շարունակէին հայոց պատմութեան եւ մշակոյթի վերաբերեալ իրենց ուսումնասիրութիւնները: Սակայն հայ մշակոյթի եւ արուեստի ոլորտը 1915-էն ետք ընդհատուած է եւ մեծապէս կորսնցուցած 19-րդ դարու հարստութիւնը եւ բազմազանութիւնը:

Թուրքիոյ մէջ հայագիտութեան պատմութիւնը միեւնոյն ժամանակ պատմութիւնն է յետ-1915-ի կորուստին:

20-րդ դարու սկիզբը աշխարհի տարբեր երկիրներու մէջ թափ առած են հայոց պատմութեան եւ մշակոյթի վերաբերեալ ուսումնասիրութիւնները, սակայն նոյն շրջանին Թուրքիոյ մէջ հայագիտութիւնը ակադեմական մօտեցում չէ ունեցած: Թուրքիոյ մէջ Հայագիտութիւնը միայն վերջին շրջանին ստացած է ակադեմական մօտեցում: Այս փոփոխութեան կարեւոր քայլերը կը ներառեն 1915-ը սպրած մտաւորականներու աշխատանքները, եւ ամենօրեայ հայերէն թերթերու եւ պարբերաթերթերու գործունէութիւնը, որոնք Հանրապետական Թուրքիոյ շրջանին, 1915-ին կորսուած մտաւորական հարստութեան եւ յաջորդ սերունդներու մէջ կանուրջ հիմնելու ուղղութեամբ գործունէութիւն տարած են:

### ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԷՆ ՄԻՆՉԵՒ 1990-ԱԿԱՆՆԵՐ

Նախքան Հանրապետական շրջանը, 19-րդ դարու ընթացքին Օսմանեան Կայսրութեան մէջ ընկերային եւ տնտեսական կեանքի փոփոխութիւնները արձագանգած են նաեւ հայերու ընկերային, մշակութային եւ գրական կեանքին մէջ: 1860 եւ 1863 տարիներու ընթացքին Հայ Ազգային Սահմանադրութիւնը, որ կը նպատակադրէր կազմակերպել հայ կեանքը աշխարհիկ եւ հոգետր կառոյցներու հիմքի վրայ, կը հանդիսանայ այս փոփոխութիւններու քաղաքական արտայայտումը:<sup>23</sup> Նոյն շրջանին կը նկատուի, որ շատցած են առօր-եայ կեանքի վերաբերեալ աշխատութիւնները՝ ե՛ր գիտական շրջաններու, ե՛ր քաղաքներու մէջ: Առօրեայ կեանքը գրական աշխատութիւններու միջոցաւ ներկայացրած են շատեր, անոցն կարգին՝ Թըլկատիւնցի (Յովհաննէս Յարութիւնեան, 1860-1915), Ռուբէն Չարդարեան (1874-1915), Երուանդ Օտեան (1869-1926) եւ Յակոբ Պարոնեան (1843-1891):<sup>24</sup>

Թէոդիկի (Թէոդորոս Լէպճիճեան) եւ Յակոբ (Ճօլօլեան) Սիրու-նիի աշխատանքները, որոնց շնորհիւ 19-րդ դարու Հայկական մշակութային կեանքը փոխանցուած է 20-րդ դարու սկիզբ, կը համարուին հայագիտութեան ամենէն կարեւոր աղբիւրներէն: Հայոց պատմութեան եւ մշակոյթի առումով մեծ կարեւորութիւն ունին եւ գլխաւոր աղբիւր կը համարուին Թէոդիկի հետեւալ աշխատութիւնները. «Ամենուն Տարեցոյցը» օրացոյցային աշխատանքը, որու միջոցաւ կը ներկայացնէ 1907-1929 թուականներու ընթացքին հայ համայնքի կեանքի արձանագրութիւնը: «Յուշարձան Ապրիլ 11-ի»,<sup>25</sup> որ կը պարունակէ Տեղասպանութեան զոհ 761 մտաւորականներու, ներ-

<sup>23</sup> Vartan Artinian, Osmanlı Devleti'nde Ermeni Anayasası'nın Doğuşu 1839-1863 [Օսմանեան Պետութեան Մէջ Հայ Ազգային Սահմանադրութեան Ծնունդը 1839-1863], քարգմանիչ՝ Zülal Kılıç (İstanbul: Aras, 2004), էջ 90:  
<sup>24</sup> Kevork B. Bardakjian, Modern Ermeni Edebiyatı [Հայ Արդի Գրականութիւնը], քարգմանիչ՝ Fatma Ünal, Maral Aktokmakyan (İstanbul: Aras, 2013), էջ 115-212:  
<sup>25</sup> Թէոդիկի, Յուշարձան 1915 ապրիլի (11) 24-ի, Կ. Պոլիս, 1919:

առեալ 24 Ապրիլին 1915-ին Իսթանպուլի մէջ ձերբակալուած 143 մտաւորաններու կենսագրական տեղեկութիւններ, ոմանց աշխատանքներէն հատուածներ եւ այս նիւթի մասին այլ տարբեր աշխատութիւններ: Թէոդիկին աշխատութիւնն է նաեւ «Չուլումը Եւ Մեր Որբերը» եւ վերջապէս «Տիպ Ու Տառ»,<sup>26</sup> որ նուիրուած է Հայոց Այբուբենի 1500 եւ հայկական տպագրութեան 400 ամեակին:

Սիրունին, որուն աշխատանքները մեծ ազդեցութիւն ունեցած են 1915-էն առաջ եւ յետոյ, երիտասարդ տարիներուն յօդուածներ ստորագրած է Ազատամարտ, Բիւզանդիոն եւ Արեւելք թերթերուն մէջ: 1915-էն փրկուած, մինչեւ 1922 սնացած է Իսթանպուլի մէջ եւ շարունակած է գործունէութիւնը: Փոխադրուած է Ռումանիա: Մեծ ներդրում ունեցած է հայոց պատմութեան ուսումնասիրութեան մէջ, յատկապէս «Պոլիս Եւ Իր Դերը» քառահատոր աշխատասիրութեանը, որուն մէջ ներկայացուցած է 1453 թուականէն ի վեր Իսթանպուլի մէջ հայերու կեանքը, ինչպէս նաեւ «Թանգիմաթ Եւ Հայերը» ու «Էջեր Արեւմտահայ Գրականութեան Պատմութենէն»<sup>27</sup> գիրքերով:

### ԹԵՐԹԵՐՈՒ ԵՒ ԱՆՀԱՏՆԵՐՈՒ ԴԵՐՈԸ 1923-ԷՆ ԵՏՔ

1923-էն մինչեւ 1990-ականներ հայոց պատմութեան, լեզուի եւ մշակոյթի գիտաշխատողները իրենց ուսումնասիրութիւնները մեծ մասամբ հրատարակած են թերթերու, պարբերաթերթերու, կամ ալ դպրոցներու, հիւանդանոցներու եւ այլ հաստատութիւններու տարեկան պարբերաթերթերու մէջ: Արեւմտահայերէնի եւ այս լեզուով գրականութեան մէջ աշխատանքներ հրատարակած են Յակոբ Մարթայեան Տիլաշարը եւ Թուրկոյթ Քութը: Մարթայեանը, ով կը

<sup>26</sup> Թէոդիկի, Տիպ ու Տառ՝ «Գիր»-ին Ծագման Եւ Միջազգային Ու Հայկական Տպագրութեան Վրայ Ձգուած Ակնարկ Մը, Կոստանդնուպոլիս, 1912:  
<sup>27</sup> Պոլիս եւ իր Դերը, Պեյրութ, Անթիլիաս, 1965: Թանգիմաթ եւ Հայերը, Պատմա-Բանասիրական Հանդէս, 1966, էջ. 53-66: Էջեր Արեւմտահայ Գրականութենէն, Պատմա-Բանասիրական Հանդէս, 1972, էջ. 35-47:

համարուի ժամանակակից թրքերենի հիմնադիրներն մեկը եւ թրքերեն Լեզուի Ընկերակցութեան հիմնադիր անդամներն մեկն է, յատկապէս Մարմարա թերթին մէջ թերթօններ ստորագրած է: Թուրկուք Քուքի մասնագիտութիւնը եղած է թրքերեն լեզուն: Չնայած այս հանգամանքին, Քուքը 1980-ականներուն եղած է հայատառ թրքերեն նիւթերը ուսումնասիրող առաջին մասնագէտներէն մեկը: Հայատառ թրքերենի ոլորտը ներկայիս Թուրքիոյ գիտական շրջանակներու մէջ մեծ հետաքրքրութիւն կը վայելէ:

Մինչեւ 1990-ականներ հայոց պատմութեան տարբեր ոլորտներու մէջ ուսումնասիրութիւններու հեղինակ եղած են Հրանդ Ասատուրը, Թորոս Ազատեանը, Հրանդ Տէր Անդրէասեանը, Վարուժան Քէօսեանը, Գէորգ Փամպուրճեանը, Վահրամ Փարունեանը, Լեւոն Փանոս Տապալաղեանը, Մկրտիչ Մարգարեանը, Շաւարշ Քահանայ Պալըմեանը, Պիմէն Զարդարեանը եւ Փարս Թուղլաճըն: Յատկապէս 1930-ականներու ընթացքին կատարած իր աշխատութիւններով յայտնի Թորոս Ազատեանը գրած է գիրքեր երաժշտաբան, երգահան եւ ազգագրագէտ Կոմիտաս Վարդապետի կեանքի եւ Ակնի պատմութեան շուրջ:<sup>28</sup> 1948-ին հրատարակած է «Մշակոյթ» անուամբ ազգագրական պարբերաթերթը, որ լոյս տեսած է տարեկան դրութեամբ: Ազատեանը Ժամանակ թերթի համար թերթօններ ստորագրած է, նիւթ ունենալով հայ մշակոյթի պատմութիւնը: Պատմաբանութեան բնագաւառի մէջ ուսումնասիրութիւններու հեղինակ Գէորգ Փամպուրճեանը 1967-էն սկսեալ աշխատած է որպէս պատրիարքութեան (Պատրիարքութիւն Հայոց Թուրքիոյ) պատասխանատու եւ եղած է պատրիարքութեան «Շողակաթ» պարբերաթերթի գլխատր խմբագիրը: Փամպուրճեանը յատկապէս հայերէն աղբիւրներու հիման վրայ մեծ թիով հայերէն եւ թրքերէն

28 Կոմիտաս Վարդապետ, Իսթանպուլ, 1931 եւ Ակն՝ Նիւթեր Իր Մշակոյթին ու Պատմութեան Համար, Իսթանպուլ, 1955:

աշխատանքներ գրած է:<sup>29</sup> Փարս Թուղլաճըն, որ յայտնի է Օսմանեան պատմութեան մասին ուսումնասիրութիւններով եւ բառարանային աշխատանքներով, ուսումնասիրած է Պալեաններու եւ Տատեաններու ընտանիքները, զանոնք որակելով Օսմանեան ընկերային կեանքի մաս: Թուղլաճը նաեւ աշխատած է հայոց պատմութեան եւ գրականութեան մասին այլ նիւթերու վրայ: 1940-ականներէն մինչեւ 70-ականներ, Իսթանպուլի Համալսարանի Պատմութեան Բաժինի մէջ պաշտօնավարող Հրանդ Տէր Անդրէասեանն ալ յատկապէս Օսմանեան պատմութեան մասին հայերէնէն թարգմանութիւններով եւ հաւաքած նիւթերով մեծ ներդրում ունեցած է հայագիտութեան մէջ:

Այս շրջանին, վերոյիշեալ անուններու, ներառեալ բազմաթիւ այլ գրողներու, հայագիտութեան մէջ կատարած կարեւոր աշխատանքները տեղ գտած են պարբերաթերթերու մէջ: 1908-ին Սարգիս եւ Միսակ Քոչունեան եղբայրներու կողմէ նախա-հանրապետական շրջանին հիմնադրուած եւ հանրապետական շրջան փոխանցուած այս թերթի փորձառութիւնը ներկայացնող Ժամանակ թերթը մինչեւ օրս կը շարունակէ իր գործունէութիւնը: Ժամանակը այս երկար գործունէութեան ընթացքին, յատկապէս հանրապետութեան շրջանին մեծ տեղ տուած է հայ մտաւորականներու աշխատանքներուն, որոնք նուիրուած էին հայոց պատմութեան եւ մշակոյթին:

Նոր Մարմարա թերթը, որ հիմնուած է 1940-ին Սուրէն Շամլեանի կողմէ, նոյնպէս կը շարունակէ իր գործունէութիւնը: 1967-էն ի վեր թերթի գլխատր խմբագիրն է Ռուպէր Հատտեճեանը: Նոյն շրջանին հիմնուած Նոր Օր, Նոր Լուր եւ Ճառագայթ շաբաթաթերթերու

29 Փամպուրճեանի հայերէն աշխատանքներն են՝ Մատենագիտութիւն Հանրապետական Յիմնամեայ Շրջանի Իսթանպուլահայ Գիրքի, Շողակաթ, 1976-1978. Յակոբ Պատրիարք Նալեան, Իսթանպուլ, 1981. Յովհաննէս Պատրիարք Կողոտ, Իսթանպուլ, Շողակաթ, 1991. Ինչպէս նաեւ հրատարակութեան պատրաստած է Երեմիա Չէլէպին Քէօմուրճեանի աշխատութիւնը՝ 1660-ի Իսթանպուլի Հրդեհի պատմութիւնը, Իսթանպուլ, Շողակաթ, 1991: Փամպուրճեանի թրքերէն գործերու մէկ մասը 2002-2003 թուականներուն հրատարակած է Արաս Հրատարակչութիւնը՝ 4 հատորով՝ Ermeni Kaynaklarından Tarihe Katılar [Հայկական Աղբիւրներէն Պատմութեան Ներդրումներ] խորագիրով:

գործունեությունը դադրած է: Սակայն հանրապետության հիմնադրումեն առաջ հիմնուած Ժամանակը եւ Միակուսակցական համակարգի շրջանին հիմնուած Նոր Մարմարա թերթը, չնայած բոլոր ճնշումներուն եւ գրաքննութիւններուն, հայ մշակոյթի եւ պատմութեան մասին հրատարակած բազմաթիւ աշխատանքներու շնորհիւ մեծ ներդրում ունեցած են հայագիտութեան մէջ:

Բացի անկախ թերթերէն եւ պարբերաթերթերէն, հայկական ուսումնասիրութիւններու մասին նիւթեր կան նաեւ կրօնական եւ ընկերային կառոյցներու հրատարակութիւններու մէջ: Ասոնցմէ ամենէն կարեւորը Սուրբ Խաչ Դպրեվանք Հիմնարկին, 1952 թուականէն ի վեր ամէն տարի հրատարակուող Շողակաթ պարբերաթերթն է: 1978-ին լոյս տեսած հատորին մէջ տեղ գտած է Գեորգ Փամուքճեանի «Մատենագիտութիւն Հանրապետական Յիսնամեայ Շրջանի Իսթանպուլահայ Գիրքը» աշխատութիւնը: Այս մատենագրութեան մէջ, որուն մէջ տեղ գտած են 1923-1973 ընթացքին Թուրքիոյ մէջ հրատարակուող հայերէն գիրքերը, կարեւոր աղբիւր կը հանդիսանան հայագիտութեան համար: Հայկական մշակոյթի եւ պատմութեան մասին կարեւոր նիւթեր տեղ գտած են նաեւ հետեւի պարբերաթերթերու մէջ՝ Պատրիարքարանի Լրաբերը, Կեդրոնական Վարժարանի Սանուց Միութեան, 1948-ին հրատարակուիլ սկսած Հանդէս Մշակոյթի, Վիեննական Միխթարեան Վարժարանի Սանուց Միութեան, 1954-ին սկսած Սան մշակութային պարբերաթերթը:

Հանրապետութեան շրջանին արգիւտած էր թատերական բեմադրութիւններ ընել թրքերէնէ գատ այլ լեզուներով: 1946-ին այս արգելքը վերջ գտած է եւ 1915-էն առաջ հարուստ հայկական թատրոնը, որ կը բեմադրուէր հայերէն, նորէն կեանք առած է: 1946-ը նաեւ «Քուլիս» պարբերաթերթի հիմնադրութեան թուականն է, որ շարունակած է իր գործունեութիւնը շուրջ 50 տարի: Հայերէն հրատարակուող Քուլիսը հիմնուած եւ խմբագրուած է Յակոբ Այվազի կողմէ մինչեւ 1996, մինչեւ անսաթերթին գործունեութեան դադրիլը: Քուլիսը եղած է Թուրքիոյ մէջ ամենէն երկար գործունեութիւն ծաւալած թատերական

հանդէսը: Նպատակը եղած է կեդրոնանալ յատկապէս հայերէն բեմական կեանքին վրայ: Հանրապետութեան շրջանին, ինչպէս բազմաթիւ այլ թերթեր եւ պարբերաթերթեր, ժամանակի ընթացքին սկսած է կեդրոնանալ հայոց պատմութեան եւ մշակոյթի մասին յօդուածներու եւ մատենագրութիւններու վրայ եւ դարձած է հարուստ պարբերաթերթ:

Նոյնիսկ եթէ ներդրումը հայագիտութեան մէջ վիճելի է, անհրաժեշտ է խօսիլ նաեւ Հանրապետական շրջանին ի յայտ եկած Հայկական Հարցի, հայերու եւ 1915-ի պատմագրութեան մասին: Ֆաթմա Միլլէ Կեօշէքը, Թուրքիոյ պատմագրութեան մէջ 1915-ի վերաբերեալ 3 գլխաւոր մօտեցում կը մատնանշէ: Առաջին մօտեցումը, որ հիմնուած է Օսմանեան Կայսրութեան շրջանին, կարեւոր շրջաններու մէջ ծառայութիւն իրականացնող անձերու յիշողութիւններու եւ տեղեկագրութիւններու վրայ, առաջ կը քաշէ այն գաղափարը, որ «1915-ին եւ անկէ ետք, շրջանի պատերազմական պայմաններու անհրաժեշտութեամբ եղած են միասնական, փոխադարձ ցաւեր»: Երկրորդ պատմական մօտեցումը ստեղծուած է բազմակուսակցական համակարգի օրերուն եւ ժամանակի ընթացքին ձեռք բերած է իր իւրայատուկ մերժողական բանաձեւը: 1950-ականներուն պետութեան օգնութեամբ Անատոլիայի մէջ հայոց պատմութեան մասին հետազոտութիւններ կատարած Էսադ Ուրասի աշխատանքները կը համարուին սոյն մօտեցումի գլխաւոր բնագիրները:<sup>30</sup> Նոյն մօտեցումը 1970-ականներու պետական քաղաքական խօսոյթի, իսկ 1990-ականներուն պատմագիտութեան մէջ պաշտօնականացած, ակադեմական շրջանակներու մէջ մերժողական ուսումնասիրութիւններու հիմքը հանդիսացած է: Իսկ

<sup>30</sup> Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi [Պատմութեան Մէջ Հայերը եւ Հայկական Հարցը] (Ankara: Yeni Matbaa, 1950). Rahip Y. G. Çarkıyan-ի աշխատութիւնը՝ Türk Devleti Hizmetinde Ermeniler, 1453-1953 [Թրքական Պետութեան Ծառայութեան Մէջ Հայերը, 1453-1953] (İstanbul: Yeni Matbaa, 1953), նշեալ մօտեցումի հաստատման մէջ բոլորն ձեռնօգտագործուած է:



երրորդ ուղղութիւնը, դարձեալ 90-ականներուն յատկապէս արտասահմանի մէջ գործողներու գլխաւորութեամբ ստեղծուած է քննադատական, 1915-ի պատասխանատուութիւնը ընդունելէն շտուսափող, պատմաբանական-գիտական մօտեցում մը:<sup>31</sup> Այս շրջանին գիտական շրջանակներու մէջ Հրեական Հրկիզման ուսումնասիրութիւններու աճող կարեւորութեան հետ միասին, Հայոց Տեղասպանութեան պատմագրութիւնը եւս կը սկսի տեղ գտնել բուն եւ բաղդատական Տեղասպանութեան Ուսումնասիրութիւններու մէջ:<sup>32</sup>

### 1990-ԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

1990-ականներուն Հայագիտութեան զարգացումները կը բովանդակեն թերթերու եւ պարբերաթերթերու հետազօտական եւ հրատարակչական գործընթացները՝ ինչպէս նախորդ շրջանին: Սոյն հրատարակութիւններուն եւ հրատարակչական կեդրոններուն հիմնադրումը կապուած է Թուրքիոյ մէջ քաղաքական եւ ընկերային կեանքի փոփոխութիւններու հետ:

1980-ի յեղաշրջումէն ետք քաղաքական եւ մշակութային կեանքին վրայ մեծ ճնշումներու պատճառաւ 10 տարի ոչ մէկ նոր ձայն, ոչ մէկ նոր աշխատանք եւ փորձ տեղի ունեցած է: 1987-ին Երոմիութեան անդամակցութեան գործընթացը սկսելէն ետք յեղաշրջումի ազդեցութեան պայմանները աստիճանաբար առաւել մեղմ դարձած են: 90-ականներուն, յատկապէս ինքնութեան քաղաքականութեան եւ

<sup>31</sup> Fatma Müge Göçek, “Reading Genocide: Turkish Historiography on the Armenian Ethnic Cleansing” [Կարդալ Տեղասպանութիւնը՝ Հայկական Ազգային Մազրագումին Մասին Թրքական Պատմագրութիւնը], հրատարակուած այստեղ՝ A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire [Տեղասպանութեան Հարց մը՝ Հայերը Եւ Թուրքերը Օսմանեան Կայսրութեան Աւարտին], խմբ. Ronald G. Suny, Fatma M. Göçek եւ Norman Naimark (London: Oxford University, 2011), էջ 42-52:

<sup>32</sup> Հայոց Տեղասպանութեան պատմագրութեան համար տե՛ս. Bedros Der Matossian, “Explaining the Unexplainable: Recent Trends in the Armenian Genocide Historiography” [Բացատրել Անբացատրելին՝ Հայոց Տեղասպանութեան Պատմագրութեան Մէջ Նոր շակումներ], Journal of Levantine Studies VI/2 (Winter 2015), էջ 143-166:

պայքարներու թափ ստանալէն ետք, տեղի ունեցած են տարբեր քաղաքական եւ մշակութային միջոցառումներ, հետազօտական եւ հրատարակչական գործունէութիւններու մէջ ազատ դաշտ մը բացւած է եւ բազմաթիւ ինքնութիւններու գոյութիւնը քաջալերող ազատ թերթեր, պարբերաթերթեր եւ ձայնասփիւռներ ստեղծուած են: Kardes Türküler (Եղբայր Երգեր) խումբը, որ հիմնուած է 1993-ին, կը նպատակադրէ Անատոլիայի, Թրակիոյ եւ Միջագետքի աւանդական երգերը՝ ներառեալ հայկական ժողովրդական երգերը, մեկնաբանել բուն լեզուներով: Նոյն թուականին ստեղծուած է Քնար խումբը, որ կը նպատակադրէ ծանօթացնել Անատոլիայի Հայկական Երաժշտութիւնը ընդհանուր հանրութեան: Այս երկու խումբերը մեծ ներդրում ունեցած են Հայկական մշակոյթի՝ հանրային ասպարէզի մէջ, բազմամշակութային շրջանակներու հասանելի ըլլալուն:

Թուրքիոյ մէջ 90-ականներուն գիրքերու հրատարակութիւնը մեծ դեր խաղցած է Հայկական մշակոյթի եւ հայ ժողովուրդի մօտիկ անցեալի մասին հանրային գիտելիքի տարածման մէջ: 1977-ին հիմնուած Belge Yayınları հրատարակչութիւնը յատկապէս 80-ականներու երկրորդ կէսէն ետք, Թուրքիոյ մէջ ապրող ժողովուրդներու մօտիկ անցեալի վերաբերեալ լոյս սփռող ուսումնասիրական-հետազօտական գիրքերու եւ վկաներու տեղեկութիւններու հիման վրայ տարուած գրական աշխատանքներով, Թուրքիոյ մէջ որպէս թապու ընդունուած մեծ թիով նիւթերու, անոնց կարգին նաեւ Հայկական Հարցին վերաբերեալ պաշտօնական պատմագրութիւնը հարցականի տակ առնող հրատարակչական ուղղութիւն մը հետապնդած է: 1984-ին հիմնուած İletişim Yayınları հրատարակչութիւնը նոյնպէս, յատկապէս 1990-ականներէն սկսեալ գիրքեր հրատարակած է Թուրքիոյ մէջ ապրող կամ ապրած տարբեր ժողովուրդներու, ինքնութիւններու եւ վիճելի պատմական նիւթերու մասին: Թանէր Աքչամի Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu (Թուրքական Ազգային Ինքնութիւնը եւ Հայկական Հարցը) գիրքը կը համարուի Թուրքիոյ մէջ հայագիտական առաջին գիրքերէն, հրատարակուած է İletişim Yayınları-ի կողմէ:

1993-ին Երուանդ Թումասեանի, Մկրտիչ Մարկոսեանի, Արտաշէս Մարկոսեանի կողմէ եւ Հրանդ Տինքի մասնակցութեամբ հիմնուած է Aras Yayincilik հրատարակչութիւնը: Հրատարակչութիւնը կը նպատակադրէ հայ գրականութիւնը, յատկապէս գաւառական գրականութիւնը, թարգմանել թրքերէնի: Հայագիտութեան յառաջապահ հրատարակչութիւնը, թրքերէն կամ արեւմտեան լեզուներով գրուած եւ թրքերէն թարգմանուած հետազօտական գիրքերով մեծ ներդրում ունեցած է Թուրքիոյ մէջ հայագիտութեան զարգացման մէջ: Ան կը շարունակէ տարբեր լեզուներով հայ գրողներու աշխատանքները, ինչպէս նաեւ հայոց պատմութեան եւ մշակոյթի վերաբերեալ աշխատանքները ծանօթացնել թրքական հասարակութեան:

1996-ին ստեղծուած է Ակօս թերթը, գլխաւոր խմբագիրութեամբ Հրանդ Տինքի: Ակօսը դարձած է Թուրքիոյ առաջին թրքերէն-հայերէն շաբաթաթերթը, դարձած է հարթակ մը, որ հանրութիւնը տեղեակ կը պահէ պետութեան կողմէ հայ համայնքի հանդէպ գատողական քաղաքականութեան մասին, ինչպէս նաեւ կը գործէ որպէս զօրակցութեան երդիկ: Թերթին գլխաւոր նպատակը եղած է Թուրքիոյ հասարակութեան ծանօթացնել հայ ժողովուրդի պատմութեան եւ մշակութային ժառանգութիւնը: Ակօսը նաեւ Անատոլիայի մէջ ապրող եւ 1915-էն ետք դպրոցներու, եկեղեցիներու եւ բոլոր մշակութային աղբիւրներու կորուստի պատճառաւ մայրենի լեզուն կորսնցուցած հայերուն հայ համայնքին հետ կը ծանօթացնէ: Ակօսը, որ Հրանդ Տինքի գլխաւորութեամբ, Թուրքիոյ բոլոր խնդիրներուն հաւասար քաղաքացիութեան սկզբունքով կը մօտենար, իր հիմնադրութեան յաջորդող տարիներու ընթացքին հասցուցած է բազմաթիւ երիտասարդ աշխատակիցներ: Ակօսը որդեգրած էր հրատարակչական քաղաքականութիւն մը, որուն համաձայն քաջալերած է Հայաստան-Թուրքիա սահմանի բացումը եւ երկու դրացիներու միջեւ յարաբերութիւններու հաստատումը:

Թուրքիոյ հայ համայնքի ենթակայական լիազօրութիւն ունենալու գործընթացի մէջ կարեւոր քայլ մը կատարած Ակօսը, իր գործու-

նութեան առաջին օրէն սկսեալ Հրանդ Տինքի եւ հայերէն էջերու խմբագիր Մարգիս Սերոբեանի նման անձնատրութիւններու առաջնորդութեամբ, հիմնադրման շրջանին եւ գոյատեւման ընթացքին նեցուկ կանգնած շատերու օգնութեամբ, կը ծաւալէ տեղեկատուական գործունէութիւն մը, որ կը նպատակադրէ պահպանել եւ ներկայացնել յատկապէս այն մշակութային ժառանգութիւնը, զոր մոռացութեան ենթարկելու փորձ կը կատարուի: Այս գործունէութեան շնորհիւ ժամանակի ընթացքին հայոց պատմութեան եւ մշակոյթի մասին նիւթերը երկու լեզուով կը ներառուին հրատարակչութեան մէջ, որ լոյս կը տեսնէ շաբաթական դրութեամբ: Նաեւ Թուրքիոյ պատմութեան մէջ մեծ թաւոյ համարող Հայկական Հարցը եւ Իսլամ(ացում) հայերու նիւթը, ուսումնասիրողներու եւ վկաներու միջացաւ տեղ գտած է թերթին մէջ: Ակօսը սոյն ասպարեզին մէջ որպէս յառաջապահ, ազատ հարթակի վրայ կը շարունակէ իր ծառայութիւնը:

### 2000-ԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐԹԻՈՅ ՄԷՋ

1990-ականներու վերջին շրջանէն սկսեալ Թուրքիոյ մէջ ակադեմականները ցեղասպանագիտութեան ծիրէն ներս արտասահմանի գործընկերներու հետ սկսած են նոր երկխօսութիւններ: Միեւնոյն ժամանակ Թուրքիոյ կրթական համակարգի մագիստրոսական եւ դոկտորական ուսանողները սկսած են աշխատանքներ կատարել հայոց պատմութեան, ինքնութեան եւ մշակոյթի ոլորտներուն մէջ: Կրնանք ըսել, որ նոր էջ մը բացուած է հայագիտութեան զարգացման մէջ:<sup>33</sup>

**33** Կոմիտաս հաստատութեան կողմէ հրատարակուող Armenian Forum պարբերաթերթի երկրորդ համարի մէջ լոյս տեսած է Ռոնալտ Գրիգոր Միւնի «Օսմանեան կայսրութեան վերջին շրջանին հայերը եւ թուրքերը» խորագիրով յօդուածը : Յօդուածի շուրջ Միւնիի, Մէլիմ Տէրինկիլի, Վահագն Տատրիանի եւ Էնկին Տենիզ Աբարլլի միջեւ ստեղծուած քննարկումը 2000-ին ստեղծուած փոփոխութեան սկիզբը կը համարուի: Ronald Grigor Suny, “Armenians, Turks, and the End of Empire”, Armenian Forum 1/2 (Yaz 1998). Թանէր Աքչամի եւ Վահագն Տատրեանի միջեւ ակադեմական կապի մասին պատմող A Wall of Silence [Լռութեան Պատը, կինոնեմօխոր. Dorothee Forma, 1997] վաւերագրական ֆիլմը կարեւոր աղբիւր կը հանդիսանայ «երկխօսութեան սկիզբի» հիմքերու համար:

2000-ականներու սկզբին Ռ-ննալտ Գրիգոր Մինիի, Ֆաթմա Միլե Կեօշէքի եւ Ժիրայր Լիպարիտեանի գլխավորութեամբ հիմնուած է «Հայ-Թրքական Ուսումնասիրութեան Աշխատանոցը» (Workshop on Armenian Turkish Studies - WATS): Կեդրոնի նպատակը եղած է ակադեմականներու միջեւ ստեղծուած երկխօսութիւնը զարգացնել: Կեդրոնը 2000-2017-ականներու ընթացքին կազմակերպած է 10 գիտաժողով, որոնցմէ առաջինը եղած է Շիրակոյի մէջ, իսկ վերջինը՝ Պեռլինի մէջ: 2000-ի Սեպտեմբերին Bilgi Համալսարանի մէջ կազմակերպուած է «Կայսրութեան Վերջին Շրջանին Օսմանեան Հայերը. Գիտական Պատասխանատուութիւն եւ Ժողովրդավարութեան Հարցեր» խորագիրով գիտաժողով, որ Հանրապետական Թուրքիոյ պատմութեան մէջ առաջին գիտաժողովն է, որ հարցականի տակ կը դնէ Տեղասպանութեան մասին պետական պատմական մօտեցումը: Գիտաժողովը կարեւոր քայլ է Տեղասպանութեան քննական մօտեցումին Թուրքիոյ մէջ հաստատուելու ուղղութեամբ:

Նկատելի է, որ այս շրջանին Թուրք ուսանողները Թուրքիոյ եւ արտասահմանի մէջ, պատմութիւն, ընկերաբանութիւն, ընկերային մարդաբանութիւն, ազգագրական երաժշտաբանութիւն, մշակութաբանութիւն եւ գրականագիտութեան նման գիտակարգերու մէջ պատրաստած Մագիստրոսական եւ Դոկտորական թեզերու միջոցաւ, գիտական շրջանակներու մէջ հայագիտութեան համար կը սկսին նոր բնագաւառ բանալ: Այս նոր մօտեցումը կը քննադատէ հայոց պատմութեան, մշակոյթի եւ ինքնութեան վերաբերեալ ազգայնական մօտեցումները: Կրնանք ըսել, որ օսմաներէնէն զատ հայերէն եւ տարբեր արեւմտեան լեզուներով գրուած աղբիւրներու լոյսի ներքոյ Օսմանեան կայսրութեան վերջին շրջանէն մինչեւ օրս երկարող ժամանակահատուածի մէջ տարբեր նիւթերու վրայ կեդրոնացող այս աշխատանքները, յատկապէս Հրանդ Տինքի սպանութենէն ետք որպէս հակազդեցութիւն ձեւավորուած ընկերային յուզումնաբան գուգահեռ, դարձած են յառաջապահները քննադատական պատմագրութեան մօտեցումով առաջնորդուած Մագիստրոսական եւ Դոկտորական աշխատանքներու համար, որ առաւել բազմացած են 2007-էն ետք:


Բոլոր այս զարգացումները եւ ջանքերը, որոնք ուղղուած էին պահպանելու նախկին վիճակը, պատճառ հանդիսացած են, որ 2000-ականներուն շատնան հայոց պատմութեան եւ մշակոյթի մասին հրատարակութիւնները: Այս փոփոխութիւնը կրնանք տեսնել Թուրքիոյ համալսարաններու մէջ ermeni (հայ) բառը պարունակող ասարական ճառերու եւ ողջ Հանրապետական Թուրքիոյ շրջանին ակադեմական պարբերաթերթերու մէջ ermeni բառը խորագիրի մէջ պարունակող յօդուածներու աւելցող թիւերուն մէջ: 1986-էն մինչեւ 2015-ի վերջաւորութիւն Թուրքիոյ մէջ Մագիստրոսական եւ Դոկտորական ճառերու մէջ ermeni բառը կը գործածուի այսպէս՝ 1986-2001 ընթացքին 82 անգամ, իսկ 2001-2015 ընթացքին 718 անգամ:<sup>34</sup> Նոյնպէս Թուրքիոյ մէջ հրատարակուող եւ Ազգային Գրադարանի կողմէ քննութեան ենթարկուած 5000 պարբերաթերթերու մէջ ermeni բառը կը հանդիպի 939 անգամ, ասոնցմէ 184-ը 1986-2001 ընթացքին, եւ 527-ը 2001-2015 ժամանակահատուածին:<sup>35</sup>

Մինչեւ 2000-ականներ այս թեզերու մէջ կը գերակշռեն Հայոց Տեղասպանութեան եւ քաղաքական նիւթերու մասին աշխատանքները: Սակայն յատկապէս 2007-էն ետք կը մեծնայ այն աշխատանքներու թիւը, որոնք քննութեան կ'առնեն հայոց պատմութիւնը մինչեւ 20-րդ դար, Հայկական մշակոյթը եւ լեզուն: Այսօր կրնանք ըսել, որ Թուրքիոյ մէջ հայագիտութեան ծիրէն ներս ասարական ճառերու այս երկու գլխաւոր ձգտումները հաւասար են նիւթերու բաշխումի առումով:

Կրնանք ըսել, որ նոյն շրջանին յատկապէս համալսարաններու մէջ հայագիտական գործունէութիւնը ստացած է կառոյցային բնոյթ: Անգարայի համալսարանի Լեզու եւ Պատմութիւն-Աշխարհագրութիւն բաժինին մէջ պաշտօնապէս 1992-ին հիմնուած Հայոց Լեզու եւ Մշակոյթ ճիւղին մէջ 2001-էն սկսեալ Մագիստրոսական, եւ 2010-էն

34 Բարձրագոյն Կրթութեան Խորհուրդի Աւարտաճառերու Կեդրոն, tez.yok.gov.tr/ UlusalTezMerkezi  
35 Յօդուածներու Մատենագրութեան Թուրքիոյ Ազգային Գրադարան, makaleler.mkutup.gov.tr





Թուրքիոյ մէջ 1986-2015 տարիներու ընթացքին գրուած, համառոտութեան մէջ «Հայ» բառը պարունակող թեզերու բաշխումը՝ ըստ տարիներու:

սկսեալ Գոկտորական ծրագիր կը գործէ: 2008-ին սկսած Թուրքիա-Հայաստան յարաբերութիւններու կանոնաորումի գործընթացի ծիրէն ներս, 2009-ին երկու պետութիւններու միջեւ արձանագրութիւններու ատորագրումէն յետոյ 2010-ին Քայսէրիի Erciyes Համալսարանի մէջ, 2011-ին Էտիքնէի Trakya Համալսարանի մէջ հիմնուած են Հայոց Լեզու եւ Գրականութիւն բաժինները: 2011-ին Իսթանպուլի Kadir Has Համալսարանի մէջ արեւելահայերէն դասընթացքներ սկսած են: Իսթանպուլի մէջ Boğaziçi Համալսարանը 2008-ին իր ծրագրի մէջ աւելցուցած է «Հայաստան Թրքերէն Աշխատանքներու Ուսումնասիրութիւն» դասընթացքը, իսկ 2009-ին սկսած է արեւմտահայերէն դասընթացքները:

2001-ին Անգարայի մէջ հիմնուած Ermeni Araştırmaları Enstitüsü (ERAREN - Հայկական Ուսումնասիրութիւններու Ինստիտուտ) կը շարունակէ իր աշխատանքները որպէս վերոյիշեալ պետական-մերժողական մտեցումի բուն կեդրոն: 2001-էն սկսեալ եռամսեայ դրութեամբ կը հրատարակէ Ermeni Araştırmaları (Հայկական Ուսումնասիրութիւններ), իսկ 2002-էն սկսեալ վեցամսեայ դրութեամբ Review of Armenian Studies (Հայկական Ուսումնասիրութիւններու Հանդէս) պարբերաթերթերը:

## ԴԵՊՈ ՌԻՍԻՄԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

1900-ականներու ընթացքին Թուրքիոյ մէջ սպորող ժողովուրդները սկսած են մեծ հետաքրքրութիւն ունենալ իրենց անցեալին նկատմամբ: Այս տարիներէն մինչեւ մեր օրերը կը մեծնայ նաեւ հայերու պատմութեան հանդէպ հետաքրքրութիւնը, սակայն զգալի է պակասը հայագիտութեան կարիքներուն տարրական լուծումներ առաջադրող հաստատութիւններու: Այս պակասը կ'ամբողջացուի անհատ փորձերու եւ անհատական յարաբերութիւններու միջոցաւ, սակայն ուսումնասիրութիւնը առաւել ընդլայնելու ջանացող գիտաշխատողներու առջեւ մեծ արգելքներ կը գոյանան, երբեմն կարգ մը նիւթերու ուսումնասիրութիւնը անհնարին կը դառնայ: Իսթանպուլի մէջ հայագիտութեան վրայ կեդրոնացած հաստատութիւն հիմնելու միտքը այս կարիքի արդիւնքն է:

19 Յունուար 2007-ին Հրանդ Տինքը Ակօս խմբագրատան մուտքին սպանուելէ ետք ստեղծուած Հրանդ Տինք Հիմնարկը (ՀՏՀ), հիմնադրման գաղափարախօսութեան ընդհանրական սկզբունքներու հիման վրայ կը կազմակերպէ միջազգային գիտաժողովներ եւ կը համախմբէ Թուրքիայէն եւ արտասահմանէն սկադեմականներու աշխատանքները, նոր հիմք կը ստեղծէ ապագայի նոր գաղափարներու համար: Հրանդ Տինք Հիմնարկը, 2007-էն սկսեալ կ'իրականացնէ աշխատանքներ, որոնք ուղղուած են Թուրքիոյ եւ Սփիւքի հայերու, Թուրքիոյ մէջ հայ ըլլալու փորձառութեան, Թուրքիոյ մէջ բազմամըշակութային ժառանգութիւնը բացայայտելու եւ պահպանելու նպատակաւ կը կատարէ Թուրքիոյ տարածքին վրայ հայերու, յոյներու, ասորիներու եւ հրեաներու ժառանգութեան կարեւոր բաղկացուցիչ մաս հանդիսացող եկեղեցիներու, սինակոկներու, դըպրոցներու, վանքերու, հիւանդանոցներու, որբանոցներու, գերեզմատուներու ցանկագրութիւնը, այս վայրերուն կեանք վերադարձնելու աշխատանքներ կը կատարէ, կը հաւաքագրէ արխիւներ,

լուսանկարներ, փաստաթուղթեր եւ գիրքեր, ի մի բերուածը մատչելի կը դարցնէ գիտաշխատողներու համար, կը կատարէ բանաւոր պատմութեան աշխատանքներ՝ Թուրքիոյ մէջ բնակող հայերու յիշողութիւնը արձանագրելու համար:

Որպէս եզրակացութիւն ըսենք, որ այս օրերուս, երբ Թուրքիոյ մէջ կը սնունդայ հայագիտութեան վերաբերեալ հետաքրքրութիւնը, 2007-էն մինչ այսօր Հրանդ Տինք Հիմնարկը իր գործունէութիւնով կը ջանայ զարգացնել հայագիտական հաւաքական յիշողութիւն, եւ նշեալ պահանջներուն արձագանգելը կը համարէ իր պատասխանատուութիւնը:

## ՀՐԱՆՊ ՏԻՆՔ ՀԻՄՆԱՐԿԻ ՊՈԼԻՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

### ՏԵՍԼԱԿԱՆ

*Հրանդ Տինք Հիմնարկի Պոլիս Հայկական Ուսումնասիրութիւններու Ինստիտուտը՝ Հրանդ Տինք Հիմնարկի յարկին տակ, ինչպէս հիմնարկի այլ աշխատանքները, կը զարգացնէ պատմական մօտեցում՝ հեռու ազգայնականութենէն, ցեղապաշտութենէն եւ սեռական տարբերութիւններէն, ուր կը գերակշռէ փիլիսոփայական, բարոյական մօտեցում: Կը ջանայ պատմութիւնը դուրս հանել սառած վիճակէն եւ դարձնել ներկայ գիտակցութեան մաս: Կը ջանայ մօտեցնել գիրար համայնքները, անցեալի հետ առերեսուելով ստեղծել միասնական յիշողութիւն, այս հողին տարբեր մշակոյթները ճանչնալով՝ ապրեցնել, իբրեւ ոչ անցեալի մը մասնիկ, այլ սերունդէ սերունդ փոխանցուած կենդանի ժառանգութիւն: Կը ջանայ ստեղծել ապագայ մը, ուր նշանաբանները չեն իշխողը, այլ կը գերիշխեն խիղճը եւ խաղաղութեան լեզուն:*

### ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

*Հրանդ Տինք Հիմնարկի Պոլիս Հայկական Ուսումնասիրութիւններու Ինստիտուտը կը նպատակադրէ՝ Թուրքիոյ հին ժողովուրդներէն մէկը հանդիսացող հայերու եւ միւս համայնքերու միջեւ յարաբերութիւններու պատմութեան եւ մշակութային արտացոլումներուն, գիտական, միջ-գիտակարգային հասկացողութեամբ ուսումնասիրելով ի յայտ բերել եւ սատար կանգնիլ մասնակցային ժողովրդավարական պատմութեան գրուելուն:*

*Ինստիտուտը կը նպատակադրէ՝ Թուրքիոյ եւ արտասահմանի մէջ նոյն նպատակը հետապնդող համալսարաններու, կեդրոններու, հաստատութիւններու, միութիւններու, հասարակական կազմակերպութիւններու հետ համագործակցիլ եւ փոխադարձ կապերու միջոցաւ ակադեմիական ուսումնասիրութիւններուն որակը բարձրացնել, ակա-*

դեմականներու միջեւ կամուրջներ ստեղծել եւ հասցնել նոր ուսումնասիրողներ, ստեղծել հայոց պատմութեան եւ մշակոյթի վրայ կեդրոնացած գրադարան եւ արխիւ, որ բաց ըլլայ բոլորի համար, ինչպէս նաեւ ներդրում ունենայ Արեւմտահայերէնի սերունդէ սերունդ փոխանցումին:

#### ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆՆԵՐ

Իսթանպուլի դիրքի եւ Հայկական մշակոյթի եւ պատմութեան առումով, որպէս «քնական կեդրոն», ստեղծել կամուրջներ աշխարհի տարբեր պետութիւններու մէջ ապրող հայազէտներու միջեւ, զարգացնել կապեր տարբեր գրադարաններու, արխիւներու, կեդրոններու միջեւ,

Աշակցիլ հայ ժողովուրդի պատմական եւ մշակութային գոյութիւնը երեսն քերող, ազգայնականութենէ, ցեղապաշտութենէ եւ սեռական խտրականութենէ զերծ, միջգիտակարգային այլընտրանքային ուսումնասիրութիւններու ընել եւ ուսումնասիրողներու պատրաստել,

Մասնագէտներու համար իբրեւ աղբիւր հանդիսացող եւ միշտ զարգացող յատուկ գրադարանի եւ արխիւի ստեղծում, որ հարուստ է հայոց պատմութեան եւ մշակոյթի մասին նիւթերով, անոցն կարգին թուային նիւթեր: Սոյն արխիւը եւ գրադարանը դարձնել բոլորի համար բաց փաստագրութեան աղբիւր,

Զարգացնել ծրագիրներ, որպէսզի հայագիտութեան համար կենսական կարեւորութիւն ունեցող Արեւմտահայերէնը ըլլայ կենդանի եւ փոփոխուող կենսաբան գուգահեռ լեզու,

Աշակցիլ Թորքիոյ եւ արտասահմանի մէջ հայագիտական ուսումնասիրութիւններու ակադեմական մօտեցման զարգացումին, աշակցիլ հայագիտութեան մասնագէտներու՝ գտնելու աղբիւրներ Թորքիոյ եւ արտասահմանի մէջ,

Գործունէութիւններ իրականացնել՝ ակադեմական աշխատանքներու հասարակութեան հետ ծանօթացումը ապահովելու, տարածելու եւ արձագանք գտնելու համար,

Ունենալով այն գիտակցութիւնը, որ հայոց պատմութիւնը կարելոր բաղկացուցիչ է սոյն տարածաշրջանի մէջ ապրող ժողովուրդներու ընդհանուր պատմութեան, իրականացնել քանաւոր պատմութեան եւ ընդարձակ նոր ծրագիրներ՝ երեսն հանել այն մշակութային հարստութիւնները, զորս կը փորձեն մոռացութեան տալ:

Հրանդ Տինք Հիմնարկի Պոլիս Հայկական Ուսումնասիրութիւններու Ինստիտուտը, սոյն նպատակներուն համապատասխան, պիտի իրականացնէ հետազօտական աշխատանքներ, մշակէ եւ իրականացնէ ծրագիրներ, պատրաստէ տեղեկագրութիւններ, յօդուածներ, պարբերաբերքեր, ստեղծէ գրադարան եւ արխիւ, պիտի աշակցի ակադեմական եւ անհատական ուսումնասիրողներու եւ հաստատութիւններուն, կազմակերպէ խտագուած դասընթացքներ, գիտաժողովներ, ցուցադրութիւններ, համաժողովներ, քննարկումներ եւ պիտի օգտագործէ տարբեր մեթոտներ:

**ՅԱԲԵՆՈՒԾ Ա - ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ  
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ\***

ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԴՈՒՐՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԾ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ	
<b>Ազգագրական շանդէս</b> Երուանդ Լալայեան, Թիֆլիս (1895-1916)	
<b>Բազմավէպ</b> Հայկական Ճեմարան Սրբոյն Ղազարու, Վենետիկ (1843-) <a href="http://www.bazmavep.com">www.bazmavep.com</a>	
<b>Հայկագեան Հայագիտական շանդէս</b> Հայկագեան Համալսարան, Պեյրութ (1970-) <a href="http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx">www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx</a>	
<b>Շանդէս Ամսօրեայ</b> Վիեննայի Միսիթարեան Միաբանութիւն (1887-) <a href="http://mechitharisten.org/die-wiener-mechitharisten/die-publikationen/">mechitharisten.org/die-wiener-mechitharisten/die-publikationen/</a>	
<b>Հասկ Հայագիտական</b> Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, Անթիլիաս (1932-) <a href="http://www.armenianorthodoxchurch.org/en/hask">www.armenianorthodoxchurch.org/en/hask</a>	
<b>Journal of Armenian Studies (Հայկական Ուսումն. շանդէս)</b> NAASR, Պեյլմօնթ (1975-) <a href="http://naasr.org/collections/journal-of-armenian-studies">naasr.org/collections/journal-of-armenian-studies</a>	
<b>Journal of the Society of Armenian Studies (Հայկական Ուսումն. Ընկերակցութեան շանդէս)</b> SAS, Ֆրեզնօ (1984-) <a href="http://www.societyforarmenianstudies.com/">www.societyforarmenianstudies.com/</a>	
<b>Revue des Études Arméniennes (Հայկական Ուսումն. շանդէս)</b> Սորպոնի Համալսարան, Փարիզ (1920-) <a href="http://poj.peeters-leuven.be/content.php?url=journal.php&amp;journal_code=REA">poj.peeters-leuven.be/content.php?url=journal.php&amp;journal_code=REA</a>	
<b>Études arméniennes contemporaines (Ժամանակակից Հայկական Ուսումնասիրութիւններ)</b> AGBU Nubarian Library, Paris (2013 - ) <a href="http://eac.revues.org/?lang=en">eac.revues.org/?lang=en</a>	
<b>St. Nersess Theological Review (Ս. Ներսէս Աստուածաբանական շանդէս)</b> Ս. Ներսէս Ընծայարան, Արմոնք, ՆԵ (1996-) <a href="http://www.stnersess.edu/st-nersess-theological-review.html">www.stnersess.edu/st-nersess-theological-review.html</a>	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԾ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ	
<b>Բանբեր Երեւանի Համալսարանի ԵՊՀ</b> <a href="http://www.yasu.am/science">www.yasu.am/science</a>	
<b>Պատմաբանասիրական շանդէս</b> ԳԱԱ <a href="http://www.flib.sci.am/eng/HP.J/Frame.html">www.flib.sci.am/eng/HP.J/Frame.html</a>	
<b>Լրաբեր Հասարակական Գիտութիւնների ԳԱԱ</b> <a href="http://www.flib.sci.am/eng/Lraber_hasarakan_gitutyunner/Frame.html">www.flib.sci.am/eng/Lraber_hasarakan_gitutyunner/Frame.html</a>	
<b>ՎԷՄ Համահայկական շանդէս</b> <a href="http://www.vemjournal.org">www.vemjournal.org</a>	
<b>Կանթեղ</b> ԳԱԱ Ակադեմիայի Արուեստի Ինստիտուտ <a href="http://kantegh.am">kantegh.am</a>	
<b>Հայագիտական շանդէս</b> Հայկական Պետական Մանկավարժական Համալսարան <a href="http://www.armspu.am/science/t/293/ln/am">www.armspu.am/science/t/293/ln/am</a>	
<b>Հայագիտութեան Հարցեր</b> ԵՊՀ <a href="http://www.armin.am/am/Journal">www.armin.am/am/Journal</a>	
<b>21-րդ Դար</b> Նորավանք Գիտակրթական Հիմնադրամ <a href="http://www.noravank.am/arm/journals/index.php?SECTION_ID=870">www.noravank.am/arm/journals/index.php?SECTION_ID=870</a>	
<b>Բանբեր Հայագիտութեան</b> Հայագիտական Ուսումնասիրութիւնները ֆինանսատրոյ Համահայկական Հիմնադրամ <a href="http://www.haygithimnadram.am">www.haygithimnadram.am</a>	
<b>Արամազդ. Մերձավորարեւելեան Ուսումնասիրութիւնների Հայկական շանդէս</b> ԳԱԱ Արեւելագիտության Ինստիտուտ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ <a href="http://www.ancs.am">www.ancs.am</a>	
<b>Տեղասպանագիտական շանդէս</b> ԳԱԱ Հայոց Տեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ <a href="http://www.genocide-museum.am/arm/Journal-of-Genocide-Studies.php">www.genocide-museum.am/arm/Journal-of-Genocide-Studies.php</a>	

<b>Երաժշտական Նայաստան</b> Երևանի պետական կոնսերվատորիա <a href="http://www.conservatory.am/am">www.conservatory.am/am</a>	
<b>Կրթությունը և Գիտությունը Արցախում</b> Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Կրթության և Գիտության Նախարարություն <a href="http://www.bnaget.am/#/journals">www.bnaget.am/#/journals</a>	
<b>Հայկական Քաղաքագիտական Հանդես</b> Երևանի Պետական Լեզուախաասարակագիտական Համալսարան <a href="http://www.arjps.org">www.arjps.org</a>	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԲԾ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔԵՐ	
<b>Պատմություն և Մշակույթ Հայագիտական Հանդես</b> ԵՊՀ <a href="http://www.publications.yzu.am">www.publications.yzu.am</a>	
<b>Բանբեր Մատենադարանի</b> «Մատենադարան» Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի Ինստիտուտ <a href="http://www.matenadaran.am">www.matenadaran.am</a>	
<b>Գիտական Աշխատություններ</b> ԳԱԱ Շիրակի Հայագիտական Հետազոտությունների Կենտրոն <a href="http://www.shirakcenter.sci.am">www.shirakcenter.sci.am</a>	
<b>Ակունք</b> ԵՊՀ Իջևանի Մասնաճիղ <a href="http://www.ijevan.yzu.am/science/collection-of-scientific-articles/">www.ijevan.yzu.am/science/collection-of-scientific-articles/</a>	
<b>Պատմություն և Հասարակագիտություն</b> Հայկական Պետական Մանկավարժական Համալսարան <a href="http://www.aspu.am">www.aspu.am</a>	
<b>Գրականագիտական Հանդես</b> ԳԱԱ Գրականության Ինստիտուտ <a href="http://litinst.sci.am">litinst.sci.am</a>	
<b>Չափակեանական Ընթերցումներ</b> ԳԱԱ Լեզվի Ինստիտուտ <a href="http://www.language.sci.am">www.language.sci.am</a>	
54	ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼԵՆ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ

<b>Հայոց Պատմության Հարցեր</b> ԳԱԱ Պատմության Ինստիտուտ <a href="http://www.academhistory.am">www.academhistory.am</a>	
<b>Բանբեր Հայաստանի Արխիվների</b> Հայաստանի Ազգային Արխիվ <a href="http://www.armarchives.am/">www.armarchives.am/</a>	
* Այս ցանկը պատրաստում է Հայաստանի Հանրապետության Կրթության և Գիտության Նախարարության կայքէջին վրայ գտնուած «Ատենախօսությունների Հիմնական Արխիվների և Դրոյթների Հրատարակման Համար Ընդունելի Պարբերական Գիտական Հրատարակությունների Ցուցակ»-ին հիման վրայ: Հաստատություններու և հրատարակություններու պաշտօնական անունները այստեղ տրուած են դասական ուղղագրութեամբ:	
	ՅԱԲԵՆՈՒԲԾ Ա - ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
	55

## ՅԱԻԵԼՈՒԾ Բ – ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ԴՈՒՐՍ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐ\*

ԱՄՆ	
Ամերիկայի շայնց Ցեղասպանության Թանգարան <a href="http://www.armeniangenocidemuseum.org/">www.armeniangenocidemuseum.org/</a>	
Ռուսական, Երասիական եւ Արեւելեան Եւրոպայի Ռուսումնասիրություններու Մելիքյան Կեդրոն, Արիզոնայի Համալսարան <a href="http://melikian.asu.edu/">melikian.asu.edu/</a>	
Մլավական, Արեւելեան Եւրոպայի եւ Երասիական Ռուսումնասիրություններու Ինստիտուտի Հայագիտական Ծրագիր, Պրոքրիի Գալիֆորնիայի Համալսարան <a href="http://isees.berkeley.edu/asp">isees.berkeley.edu/asp</a>	
Չարլզ Ք. եւ Էլիզաբեթ Մ. Քէնոսեան Անուան Արդի շայնց Պատմության եւ Գրականության Ամբիոն, Պոսթոնի Համալսարան	
Գրիգոր եւ Գլարա Չոհրաբ տեղեկատվական կենտրոն <a href="http://zohrabcenter.org/">zohrabcenter.org/</a>	
Հայագիտական ուսումնասիրություններու կենտրոն, Միչիկընի Համալսարան, Տիրպորն <a href="http://www.umd.umich.edu/dept/armenian/">www.umd.umich.edu/dept/armenian/</a>	
Չորեան Ինստիտուտ <a href="http://zoryaninstitute.org">zoryaninstitute.org</a>	
Հայկական Ռուսումնասիրություններու Ծրագիր, Գալիֆորնիայի Համալսարան, Իրվին <a href="http://sites.uci.edu/armenianstudies/">sites.uci.edu/armenianstudies/</a>	
Գրիգոր Նարեկացի շայնց Լեզուի եւ Մշակոյթի Ամբիոն, Գալիֆորնիայի Համալսարան, Լոս Անճրլըս <a href="http://www.sscnet.ucla.edu/history/centers/armenian/index.html">www.sscnet.ucla.edu/history/centers/armenian/index.html</a>	
Արդի շայնց Պատմության Ամբիոն, Գալիֆորնիայի Համալսարան, Լոս Անճրլըս <a href="http://www.sscnet.ucla.edu/history/centers/armenian/index.html">www.sscnet.ucla.edu/history/centers/armenian/index.html</a>	
Հայագիտության BA Ծրագիր, Մերձավոր Արեւելեան Լեզուներու եւ Մշակոյթներու Բաժին, Գալիֆորնիայի Համալսարան, Լոս Անճրլըս <a href="http://www.nelc.ucla.edu/">www.nelc.ucla.edu/</a>	
* Պատրաստուած է Լորավանքի «Արտերկրի Հայագիտական Կեդրոնները» աշխատանքին հիման վրայ, (Լորավանք, Երևան, 2014) Էջ 155-169:	

Հայ Հնագիտության եւ Ազգագրության Ռուսումնասիրության Կեդրոն, Հնագիտության Գոսթէն Ինստիտուտ, Գալիֆորնիայի Համալսարան, Լոս Անճրլըս <a href="http://armenianarchives.ss.ucla.edu">armenianarchives.ss.ucla.edu</a>	
Հայկական Ռուսումնասիրություններու Ծրագիր, Գալիֆորնիայի Պետական Համալսարան, Ֆրեզնո <a href="http://www.fresnostate.edu/artshum/armenianstudies/">www.fresnostate.edu/artshum/armenianstudies/</a>	
Միչին Արեւելքի, Հարավային Ասիոյ եւ Ափրիկեան Ռուսումնասիրություններու բաժան- Հայերէն Լեզուի Ծրագիր, Գորումպիայի Համալսարան <a href="http://www.columbia.edu/cu/mesaas/languages/armenian/">www.columbia.edu/cu/mesaas/languages/armenian/</a>	
Հայագիտական Ռուսումնասիրություններու Ընկերակցություն, Ֆրեզնո, Գալիֆորնիա <a href="http://societyforarmenianstudies.com/">societyforarmenianstudies.com/</a>	
Հայկական Ազգային Ինստիտուտ, Ուաշինկթոն <a href="http://www.armenian-genocide.org/">www.armenian-genocide.org/</a>	
Հայկական Ռուսումնասիրություններու Ազգային Ընկերակցութիւն <a href="http://www.naasr.org/">www.naasr.org/</a>	
Հայկական Միջազգային Քաղաքական Ռուսումնասիրություններու Խմբակ <a href="http://www.aiprg.net">www.aiprg.net</a>	
Հայ Եկեղեցոյ Ռուսումնասիրական եւ Վերլուծական Խմբակ <a href="http://acrag.wordpress.com/">acrag.wordpress.com/</a>	
Հայկական Ռուսումնասիրություններու Ինստիտուտ, Հարավային Գալիֆորնիայի Համալսարան <a href="http://dornsife.usc.edu/cf/faculty-and-staff/staff-by-dept.cfm?did=1001730000">dornsife.usc.edu/cf/faculty-and-staff/staff-by-dept.cfm?did=1001730000</a>	
Մաշտոց Հայագիտական Ռուսումնասիրություններու Ամբիոն, Հարվըրտի Համալսարան	
Հայկական Ռուսումնասիրություններու Նախագիծ, Մինեսոթայի Համալսարանի Հրկիզման եւ Ցեղասպանության Ռուսումնասիրություններու Կեդրոն <a href="http://www.chgs.umn.edu/pdf/ArmenianResearchProject.pdf">www.chgs.umn.edu/pdf/ArmenianResearchProject.pdf</a>	
Հայկական Ռուսումնասիրություններու Ծրագիր, Միչիկընի Համալսարան, Անն Արպըր <a href="http://www.lsa.umich.edu/asp">www.lsa.umich.edu/asp</a>	
Մարի Մանուկեան շայնց Լեզուի եւ Գրականության Ամբիոն, Միչիկընի Համալսարան, Անն Արպըր	

<b>Ալբրա Մանուկեան Արդի Հայոց Պատմութեան Ամբիոն, Միշիկընի Համալսարան, Անն Արպըր</b>	
<b>Հայերէնի Ծրագիր, Արդի Եւ Գասական Լեզուներու Եւ Գրականութեան Բաժին, Գալիֆորնիայի Պետական Համալսարան, Նորքիտ</b> <i>www.csun.edu/~fl51594/</i>	
<b>Հայերէնի Ծրագիր, Մերձավոր Արեւելեան Լեզուներու Եւ Քաղաքակրթութիւններու Բաժին, Շիգակոյի Համալսարանի</b> <i>cmes.uchicago.edu/page/armenian</i>	
<b>Գալուստեան-Մուկար Արդի Հայոց Պատմութեան Եւ Հայոց Յեղասպանութեան Ուսումնասիրութեան Ամբիոն, Քլարք Համալսարան</b>	
<b>Նորեան Հակական Ծրագիրներ, Քոննէքթիքատի Համալսարան</b> <i>armenia.uconn.edu/</i>	
<b>ԱՆԳԼԻԱ</b>	
<b>Կոմիտաս Ինստիտուտ</b> <i>www.gomidias.org</i>	
<b>Հայկական Ինստիտուտ</b> <i>www.armenianinstitute.org.uk</i>	
<b>Գալուստ Կիլպենկեան Հայկական Ուսումնասիրութիւններու Ամբիոն, Օքսֆորտի Համալսարան</b> <i>www.orinst.ox.ac.uk/administration/trust_funds/calouste_gulbenkian_professorship_of_armenian_studies.html</i>	
<b>ԱՎՍՏՐԻԱ</b>	
<b>Հայկական Ուսումնասիրութիւններու Բաժին, Արեւելեան Քրիստոնէութեան Ուսումնասիրութեան Կեդրոն, Սալզպուրկի Համալսարան</b> <i>www.uni-salzburg.at/index.php?id=205825</i>	
<b>Վիեննայի Միսիթարեան Միաբանութիւն</b> <i>www.mechitharisten.org</i>	
<b>ԱՐԺԱՆԹԻՆ</b>	
<b>Հայկական Ամբիոն, Արժանթինի Ճոն Ֆ. Քենետի Համալսարան</b>	
<b>Հայկական Ուսումնասիրութիւններու Ազատ Ամբիոն, Պունոս Այրեսի Համալսարան</b> <i>seube.filo.uba.ar/catedra-libre-de-estudios-armenios</i>	
58	ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼԵՆ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ

<b>Հայկական Ամբիոն, Ռոզարիոյի Ազգային Համալսարանի</b> <i>catedrarmeniaunr.blogspot.com/</i>	
<b>ԳԱՆԱՏԱ</b>	
<b>Հայկական Ուսումնասիրութեան Կեդրոն, Թօրոնթօ</b> <i>www.armenianresearchcenter.com/</i>	
<b>ԳԵՐՄԱՆԻԱ</b>	
<b>Հայկական Հարցերու Ինստիտուտ</b> <i>www.haydat-institut.org</i>	
<b>Մեսրոպ Հայագիտական Կեդրոն, Մարտին Լուտերի Համալսարան</b> <i>www.mesrop.uni-halle.de</i>	
<b>ԵԳԻՊՏՈՍ</b>	
<b>Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոն, Գահիրէյի Համալսարան</b>	
<b>ԶՈՒԻՑԵՐԻԱ</b>	
<b>Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեդրոն, Ժընեւի Համալսարան</b> <i>www.unige.ch/lettres/meslo/armenien/CentredRecherches.html</i>	
<b>Հայկական Ուսումնասիրութիւններու Միջազգային Ընկերակցություն</b> <i>aiea.fltr.ucl.ac.be/AIEAfr/Accueil.html</i>	
<b>ԻՍՐԱՅԷԼ</b>	
<b>Հայկական Ուսումնասիրութիւններու Ծրագիր, Երուսաղեմի Եբրայական Համալսարան</b> <i>micro5.mssc.huji.ac.il/~armenia/</i>	
<b>Երուսաղեմի Ժառանգատրաց Վարժարան</b> <i>armenian-patriarchate.com/category/educational/armenian-theological-seminary/</i>	
<b>ԻՏԱԼԻԱ</b>	
<b>Հայկական Մշակոյթի Ուսումնասիրութեան Եւ Վավերագրութեան Կեդրոն</b>	
<b>Վենետիկի Միսիթարեան Միաբանութիւն</b>	
34ԻԵՆՈՒՄԾ Բ – ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ԴՈՒՐՍ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐ	
59	



<p><b>Հայոց Լեզուի Եւ Գրականութեան Ամբիոն, Ասիոյ Եւ Միջերկրական Ափրիկէի Ուսումնասիրութեան Բաժին, Վենետիկի Ca' Foscari Համալսարան</b></p> <p><b>Պո-Արաքս Մշակութային Ընկերակցութիւն</b> www.padus-araxes.com</p>	
<b>ԻՐԱՆ</b>	
<p><b>Հայերէն Լեզուի Բաժին, Թեհրանի Իսլամական Ազատ Համալսարան</b> language.iauctb.ac.ir/en/page/2965/armenian-language</p>	
<p><b>Հայոց Լեզուի Եւ Մշակոյթի Բաժին, Օտար Լեզուներու Ճիւղ, Իսֆահանի Համալսարան</b> www.ui.ac.ir/ShowPage.aspx?page_=_form&amp;order=show&amp;lang=2&amp;sub=77&amp;PageId=7822&amp;codeV=2&amp;tempname=ForeignLanguagesFaculty</p>	
<b>Հայկական Ուսումնասիրութիւններու Ամբիոն, Թեհրանի Համալսարան</b>	
<b>ԼԵՀԱՍՏԱՆ</b>	
<p><b>Լեհաստանի Հայերու Մշակոյթի Եւ Ժառանգութեան Հիմնարկ</b> www.dziedzictwo.ormianie.pl</p>	
<p><b>Հայերի Ուսումնասիրութեան Կեդրոն, Միքոլայա Կոպերնիկա Համալսարան</b> www.centrum-armenia.umk.pl</p>	
<b>ԼԻԲԱՆԱՆ</b>	
<p><b>Հայագիտական Ամբիոն, Հայկազեան Համալսարան</b> www.haigazian.edu.lb/wp-content/uploads/2017/09/Armenian-Studies.pdf</p>	
<p><b>Հայկական Մբիաքի Ուսումնասիրութեան Կեդրոն, Հայկազեան Համալսարան</b> www.haigazian.edu.lb/research/armenian-diaspora-rc</p>	
<p><b>Համազգային Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկ</b> www.hamazkayin.com/մեր-մասին/կրթական-հաստատութիւններ/armenian-studies-a/</p>	
<p><b>Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք</b> www.armenianorthodoxchurch.org/դպրեվանք</p>	
<p><b>Խաչեր Գարուստեան Մանկավարժական Կեդրոն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն</b> www.armenianorthodoxchurch.org/խաչեր-գարուստեան-մանկավարժական-կն</p>	
60	ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԱՆՅԵԱԼԵՆ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ

<p><b>Իգնատիոս Մարյեան Դպրեվանք, Չմնառի Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւն</b> www.bzommarvank.com/seminary/big-seminary</p>	
<p><b>Ս. Միքայէլ Դպրեվանք, Չմնառի Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւն</b> www.bzommarvank.com/seminary/small-seminary</p>	
<b>ՌԻՔՐԱՆԻԱ</b>	
<p><b>Հայագիտական Կեդրոն, Ուքրանիայի Հայերու Միութիւն</b></p>	
<b>ՊԵՒՃԻՔԱ</b>	
<p><b>Հայերէնի Ծրագիր, Լուվենի Կաթողիկէ Համալսարան</b></p>	
<b>ՊՈՒԼԿԱՐԻԱ</b>	
<p><b>Հայկական և Կովկասեան Ուսումնասիրութիւններ, Սուրբ Կղիմենտ Օհրիդսկի Արևելեան Լեզուներու Եւ Մշակոյթներու Ուսումնասիրութեան Կեդրոն, Սոֆիայի Համալսարան</b> sitecreator.bg/armenianstudies/welcome.html</p>	
<b>ՊՐԱԶԻԼ</b>	
<p><b>Հայերէնի Ամբիոն, Արեւելեան Գրականութեան Բաժին, Սաօ Փաօլօի Համալսարան</b> www.letrasorientais.flech.usp.br/armenio</p>	
<b>ՌՈՍԱՆԻԱ</b>	
<p><b>Հայկական Ուսումնասիրութիւններու Ինստիտուտ, Cluj-Napoca Babeş-Bolyai Համալսարան</b></p>	
<b>ՌՈՒՍԱՍՏԱՆ</b>	
<p><b>Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոն, Միջազգային Յարաբերութիւններ Եւ Համաշխարհային Պատմութեան Ինստիտուտ, Նիժնի Նովորոտ Պետական Համալսարան</b> www.imomi.unn.ru</p>	
<p><b>Հայագիտական Կեդրոն</b> armenology.ru/</p>	
<p>ՅԱԲԵՆՈՒԹ Ք – ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ԴՈՒՐՍ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐ</p>	
61	



**Հայկական ֆոնտ, Ռուսաստանի Դաշնության Գիտություններու Ակադեմիայի Արևելեան Ձեռագիրներու Ինստիտուտ**

**ԿՐԱՍՏԱՆ**

**Հայերէնի Ամբիոն, Թիֆլիսի Համալսարան**

**Հայերէնի Ամբիոն, Թիֆլիսի Մանկավարժական Համալսարան**

**Վիրահայոց Թեմի Հայագիտական Կեդրոն**

**ՖՐԱՆՍԱ**

**Հայկական Ուսումնասիրություններու Ընկերակցութիւն**  
*www.etudes-armeniennes.org*

**Հայկական Ուսումնասիրություններու Միջերկրական Ինս-  
Տիտուտ**

**Հայկական Յիշողութեան Ազգային Կեդրոն**  
*www.cnma.fr*

**Հայկական Յիշողության Ուսումնասիրութեան Եւ Արխիւի  
Ընկերակցութիւն**  
*www.webaram.com*

**Հայկական Ուսումնասիրություններու Սայապալեան Ինստիտուտ**

**Նուբարեան Գրադարան**  
*www.bnulibrary.org/index.php/en/*

**Չոպանեան Ինստիտուտ**  
*www.tchobanian.org*

**Հայագիտութեան Բաժին, Արևելեան Լեզուներու Եւ  
Քաղաքակրթութիւններու Հանրային Դպրոց**  
*arm.inalco.free.fr*

©ՀՐԱՆԴ ՏԻՆՔ ՀԻՄՆԱՐԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ, 2018

**I3C)I.LIS**

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԵՏԱՉՕՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ**